

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF HISTORY

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**ԵՎ**

**ՄՇԱԿՈՒՅԹ**

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

**ИСТОРИЯ И КУЛЬТУРА**  
**АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ**

**HISTORY AND CULTURE**  
**JOURNAL OF ARMENIAN STUDIES**

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS  
2019

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

Նախագահ (գլխավոր խմբագիր)՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**  
*Խմբագրական խորհուրդ՝*

**Արամ Մինոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆետոր), **Ալբերտ Ստեփանյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Լևոն Չուգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Հանլետ Պետրոսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Իգիթ Ղարիբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.):

Председатель (главный редактор) - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**  
*Редакционная коллегия:*

**Արամ Սիմոնյան** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, докт. ист. наук, проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, докт. ист. наук, проф.), **Артак Мовсисян** (докт. ист. наук, проф.), **Альберт Степанян** (докт. ист. наук, проф.), **Айк Аветисян** (докт. ист. наук, проф.), **Айрапет Маргарян** (докт. ист. наук, проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (докт. ист. наук, проф.), **Арман Егиазарян** (докт. ист. наук, доц.), **Игит Гарибян** (докт. ист. наук, проф.), **Генрих Абраамян** (докт. ист. наук, проф.), **Айказ Оганесян** (докт. ист. наук, проф.), **Ашот Нерсисян** (докт. ист. наук, проф.), **Ашот Айруни** (докт. ист. наук, проф.), **Валерий Тунян** (докт. ист. наук, проф.), **Ваник Виравян** (докт. ист. наук, проф.), **Рафик Наапетян** (докт. ист. наук, проф.), **Акоб Арутюнян** (докт. ист. наук, доц.), **Овик Григорян** (канд. ист. наук, доц.), **Мхитар Габриелян** (канд. ист. наук, доц.), **Эдгар Оганнисян** (канд. ист. наук, доц.).

Chairman (Editor-in-Chief) - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**  
*Editorial Board:*

**Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyanyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate professor), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate professor), **Edgar Hovhannisyanyan** (PhD of History, associate professor).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ  
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
ИСТОРИЯ / HISTORY

Հովհաննես Խորիկյան, ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ .....	6
Oghannes Khorikyan, ON THE ISSUE OF THE CENTRE OF SATRAPIC ARMENIA Hovhannes Khorikyan, ON THE ISSUE OF THE CENTRE OF SATRAPIC ARMENIA	
Արտակ Մովսիսյան, Լիաննա Կարապետյան, ԾՈՓՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴՈՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ .....	14
Artak Movsisyan, Lianna Karapetyan, ON THE PROBLEMS OF THE CHRONOLOGICAL AND TERRITORIAL BORDERS OF THE KINGDOM OF SOPHENE	
Արգիշտի Կարդանյան, ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՏՈՀՄԸ ՏՐԴԱՏ ՄԵԾ ԵՎ ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ .....	24
Argishti Vardanyan, THE HOUSE OF MAMIKONYANS DURING THE REIGN OF TRDAT THE GREAT AND KHOSROV KOTAK	
Дмитрий Димидюк, ХОЛОДНОЕ ОРУЖИЕ В АРМЯНСКИХ ХРОНИКАХ ЭПОХИ БАГРАТИДОВ (КОНЕЦ IX- СЕРЕДИНА XI ВВ.): ТЕРМИНОЛОГИЯ ВОПРОСА .....	33
Dmytro Dymydyuk, BLADE WEAPONS IN THE MEDIEVAL ARMENIAN CHRONICLES OF THE BAGRATID ERA (END OF 9TH - MIDDLE OF 11TH CENTURIES): THE PROBLEM OF TERMINOLOGY	
Դմիտրի Դիմիդյուկ, ՍԱՌԸ ԶԵՆՔԵՐԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (IX Դ. ՎԵՐՋ-ՄԻ Դ.). ՀԱՐՑԻ ՏԵՐՄԻՆՈԼՈԳԻԱ	
Dmytro Dymydyuk, BLADE WEAPONS IN THE MEDIEVAL ARMENIAN CHRONICLES OF THE BAGRATID ERA (END OF 9TH - MIDDLE OF 11TH CENTURIES): THE PROBLEM OF TERMINOLOGY	
Դավիթ Թինոյան, ԿԻԼԻԿԻՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԵԹՈՒՄ Բ-Ի ԳԱՀԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ .....	48
Davit Tinoyan, THE ARMENIAN CATHOLICOSATE IN THE FIRST HALF OF THE RULE OF HETUM II	
Դիանա Հայրապետյան, ՕՍՄԱՆՅԱՆ ՖՈՒՏՎԱԿԱԹԻ ԵՎ ԱԽԻԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ ԱՐՀԵՍԱՎՈՐՆԵՐԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (XIII-XV ԴԴ.) .....	55
Diana Hayrapetyan, THE ROLE OF OTTOMAN FUTUWWA AND AKHI BROTHERHOOD IN THE PROCESS OF ISLAMIZATION OF ARMENIAN CRAFTSMEN (XIII-XV CC)	
Ֆելիքս Մովսիսյան, XIX Դ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՍՈՆ ՍԵՐՈՎԲԵ ԱԶՆԱՎՈՐԸ .....	63
Felix Movsisyan, FAMOUS WESTERN ARMENIAN MASON OF THE 19TH CENTURY SEROVBE AZNAVOUR	
Հովիկ Գրիգորյան, ՀՅՂ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ «ՆԺՈՒՅԳԻ ԳՈՐԾ»-Ի ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒՆՈՒՄ (1904 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ - 1905 Թ. ՄԱՐՏ) .....	77
Ovik Grigoryan, ДЕЯТЕЛЬНОСТЬ ОТВЕТСТВЕННОГО УКАЗЫВАЮЩЕГО КОНСТАНТИНОПОЛЬСКОГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН НА ПЕРВОМ ЭТАПЕ ПОДГОТОВКИ «ДЕЛА КОНЬЯ» (СЕНТЯБРЬ 1904 Г. - МАРТ 1905 Г.)	

Hovik Grigoryan, THE ACTIVITY OF ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION'S (ARF-DASHNAKTSUTYUN) CONSTANTINOPLE'S INDICATIVE ORGANIZATION IN THE FIRST STAGE OF PREPARATION OF "THE CASE OF NZHUYK" (SEPTEMBER, 1904 - MARCH, 1905)	
Վանիկ Կիրաբյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԿԻ ՀԱՍԱՐ ԶԵՆՔ-ԶԻՆԱՍԹԵՐՔԻ ՀԱՅԹԱՅԹՈՒՄԸ 1918-1920 ԹԹ.....	95
Ваник Вирабян, ПОИСК ОРУЖИЯ ДЛЯ АРМЯНСКОЙ АРМИИ В 1918-1920 ГГ	
Vanik Virabyan, THE AMMUNITION PROCURANCE OF THE ARMENIAN ARMY (1918-1920)	
Հովիկ Գրիգորյան, Վահագն Հակոբյան, ՈՒՐՎԱԳԾԵՐ ԴԱԿԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ .....	108
Овик Григорян, Ваагн Акопян, ОЧЕРКИ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ ДАВИДА АНАНУНА	
Hovik Grigoryan, Vahagn Hakobyan, NOTES ON DAVID ANANUN'S LIFE AND ACTIVITY	
Արամ Սիմոնյան, Ալեքսանդր Սաֆարյան, ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ .....	129
Арам Симонян, Александр Сафарян, ИЗ ИСТОРИИ ОЦЕНКИ ИДЕОЛОГИИ ТЮРКИЗМА В ТРУДАХ ИСТОРИКОВ АРМЕНИИ	
Aram Simonyan, Safaryan Alexander, ON THE IDEOLOGY OF TÜRKÇÜLÜK IN THE WORKS OF ARMENIAN HISTORIANS	
Валерий Тунян, ФЕЙК-НЬЮС ПРОПАГАНДЫ ТУРЦИИ И АЗЕРБАЙДЖАНА .....	137
Վալերի Թունյան, ԹՈՒՐԻՔԱՅԻ և ԱՂՐԵԶԱՆԻ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԿԵՂԾ ԼՈՒՐԵՐԸ	
Valery Tunyan, FAKE NEWS OF TURKEY AND AZERBAIJAN PROPAGANDA	

**ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ**  
**АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY**

Հայկ Ավետիսյան, Արսեն Բոբոխյան, Արտակ Գնունի, Լևոն Մկրտչյան, Նատալյա Ավետիսյան, ԹԱՂՄԱՆ ԾԵՍԻ ԻՐԱԿԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ .....	145
Гайк Аветисян, Арсен Бобохян, Артак Гнуни, Левон Мкртчян, Наталья Аветисян, ОПЫТ СИТУАЦИОННОГО АНАЛИЗА ПОГРЕБАЛЬНОГО ОБРЯДА	
Hayk Avetisyan, Arsen Bobokhyan, Artak Gnuni, Levon Mkrтчyan, Natalya Avetisyan, THE EXPERIENCE OF SITUATIONAL ANALYSIS OF THE FUNERAL RITE	
Ռաֆիկ Նահապետյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ .....	158
Рафик Напетян, ОБ ЭТНОГРАФИЧЕСКОМ ИССЛЕДОВАНИИ АРМЯНСКОГО НАРОДНОГО ТРАДИЦИОННОГО ЖИЛИЩА	
Rafik Nahapetyan, ON THE ETHNOGRAPHIC STUDY OF THE ARMENIAN NATIONAL TRADITIONAL APARTMENT	

**ԱՐԿԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**  
**ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE**

Արթուր Հովհաննիսյան, ԽՈՐԵՆ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅԱՆԻ ԳՐԱՖԻԿԱՆ .....	166
Артур Ованнисян, ГРАФИКА ХОРЕНА ТЕР-АРУТЯНА	
Arthur Hovhannisyan, KHOREN-DER HARUTYAN'S GRAPHIC	

**ՄՓՅՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**  
**ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES**

Էդիկ Մինասյան, Լևոն Բատիև, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՊԵՐԸ 1991-2019 ԹԹ. ....	174
Эдик Минасян, Левон Батиев, ОТНОШЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ ДОНА В ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ И КУЛЬТУРНОЙ СФЕРЕ В 1991-2019 гг.	

Edik Minasyan, Levon Batiev, RELATIONS OF THE 3rd REPUBLIC OF ARMENIA WITH ARMENIAN COMMUNITY OF DON IN SOCIAL-POLITICAL AND CULTURAL SPHERES IN 1991-2019  
 Արման Եդիազարյան, Ալիկ Դարիբյան, Դիանա Դավթյան, Ինքնութիւնը և ՆԴԻՐՆԵՐԸ ՍՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ..... 191  
 Арман Егиазарян, Алик Гарибян, Дианна Давтян, ПРОБЛЕМЫ ИДЕНТИЧНОСТИ АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ МОСКВЫ  
 Arman Yeghiazaryan, Alik Gharibyan, Dianna Davtyan, ISSUES OF IDENTITY OF MOSCOW ARMENIAN YOUTH  
 Հովհաննես Ալեքսանյան, ՀԱՅԱԶԳԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ..... 200  
 Ованнес Алексанян, АРМЯНЕ-ПАРТИЙНО-ГОСУДАРСТВЕННЫЕ ДЕЯТЕЛИ В СОВЕТСКИХ РЕСПУБЛИКАХ СРЕДНЕЙ АЗИИ  
 Hovhannes Aleksanyan, ARMENIANS-PARTY-STATE LEADERS IN THE SOVIET REPUBLICS OF CENTRAL ASIA

**ԲՆԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**  
**ИЗДАНИЕ РУКОПИСЕЙ / PUBLICATION OF MANUSCRIPTS**

Հայկազ Հովհաննիսյան, ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՏՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆՑԻ ՏԵՍԱԿԱՆԸ ..... 206  
 Айказ Оганесян, ВИДЕНИЕ НАЦИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ СТЕПАНОСА НАЗАРЯНЦА  
 Haikaz Hovhannisyanyan. VISION OF STEPANOS NAZARYANTS ABOUT NATIONAL EDUCATION

**ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ**  
**УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL**

Լևոն Հովսեփյան, ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՍԵԹՈՂԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ ..... 214  
 Левон Овсебян, ОСОБЕННОСТИ И МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ОБУЧЕНИЮ ПОЛИТИКИ В СФЕРЕ БЕЗОПАСНОСТИ И ОБОРОНЫ ТУРЦИИ  
 Levon Hovsepyan, THE SPECIFICS AND METHODOLOGY OF TEACHING TURKEY'S SECURITY AND DEFENSE POLICY

**ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ**  
**РЕЦЕНЗИЯ / REVIEW**

Փայլակ Ենգոյան, Էդիկ Մինասյան, «Երևանի պետական համալսարանն ու համալսարանականները Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.)», Եր., ԵՊՀ հրատ., 2019, 586 էջ + 48 ներդիր: ..... 222  
 ՄԵՐ ԵՐԱՆՏԱԿՈՐՆԵՐԸ ..... 224  
 ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ..... 226  
 INFORMATION ABOUT THE AUTHORS ..... 228  
 Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ..... 230  
 NOTICE FOR THE AUTHORS

## Հովիկ Գրիգորյան, Վահագն Հակոբյան

### ՈՒՐՎԱԳԾԵՐ ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ<sup>1</sup>

**Բանալի բառեր.** Դավիթ Անանուն, սպեցիֆիկներ, սոցիալ-դեմոկրատ, հասարակական-քաղաքական կյանք, հրապարակախոսություն, պատմագիտություն:

2020 թ. մարտին լրանում է հայագետ<sup>2</sup>, հասարակական-քաղաքական գործիչ ու հրապարակախոս Դավիթ Տեր-Դանիելյանի (Դավիթ Անանուն) ծննդյան 140-ամյակը: Նա նախորդ դարի առաջին տասնամյակների այն գործիչներից ու գիտնականներից է, ում անցած ուղին և ստեղծած գիտական ժառանգությունն անարդարացիորեն, հիմնականում քաղաքական նկատառումներով, պատշաճ ուշադրության չի արժանացել, անհարկի քննադատվել ու աղավաղվել է: Նրա պարագայում ստեղծվել է մի յուրօրինակ իրավիճակ: Լինելով մարքսիստ, սոցիալ-դեմոկրատ ու Սպեցիֆիկների կուսակցության<sup>3</sup> ղեկավարներից մեկը՝ Դ. Անանունը թշնամական, առնվազն անբարյացակամ վերաբերմունքի է արժանացել թե՛ խորհրդահայ գիտական միջավայրում<sup>4</sup>, թե՛ Սփյուռքում<sup>5</sup>, քանի որ նա և նրա կուսակցությունը հիմնականում ոչ բարեկամական հարաբերություններ են ունեցել թե՛ բոլշևիկների, թե՛ ՀՅԴ-ի հետ:

Նման պայմաններում հայ հասարակական-քաղաքական ու գիտական միջավայրում գործող հիմնական ուժերի և դրանց ազդեցությունը կրող մտավորականների ու հետազո-

\* Հոդվածը ներկայացվել է 21.11.2019 թ., գրախոսվել է 09.12.2019 թ., ընդունվել է տպագրության 20.12.2019 թ.:

<sup>1</sup> Աշխատանքը պատրաստվել է ՀՀ ԿԳՆ ԳԿ 18Տ-6Ա160 ծածկագրով «Դավիթ Անանունի կյանքը և պատմագիտական ժառանգությունը» գիտական թեմայի շրջանակներում:

<sup>2</sup> Դ. Անանունին ավելի լայն իմաստով հայագետ ենք համարում, քանի որ նրա գիտական-գրական ժառանգության մեջ պատմագիտականի կողքին նկատելի տեղ են զբաղեցնում նաև գրական-գրաքննադատական աշխատանքները, բանաստեղծությունների թարգմանությունները: Բացի այդ, խորհրդային և հետխորհրդային պատմաշրջաններում նրա պատմագիտական, տեսական աշխատանքները փիլիսոփաների ու սոցիոլոգների կողմից դիտարկվել և ուսումնասիրվել են նաև որպես հայ փիլիսոփայական ու սոցիոլոգիական մտքի դրսևորումներ: Հետևաբար՝ Դ. Անանունին լոկ որպես պատմաբան դիտելը, կարծում ենք, սահմանափակում է նրա գիտական ժառանգության սահմաններն ու նշանակությունը:

<sup>3</sup> 1903 թ. հոկտեմբերին Բաքվում ստեղծված Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության անդամներին հայ բոլշևիկներն անվանել են «սպեցիֆիկներ»՝ հայ իրականության յուրահատուկ պայմանները հաճախ ընդգծելու համար:

<sup>4</sup> Տե՛ս Արզումանյան Մ., Բոլշևիկների գործունեությունը և ռեյուցիոն շարժումները Հայաստանում 1907-1917 թթ., Ե., 1959, էջ 368-382, Վարդանյան Հ., Անդրկովկասում նացիոնալիզմի դեմ բոլշևիկների մղած պայքարի պատմությունից (1903-1920 թթ.), Ե., 1962, էջ 126-139, Գաբրիելյան Հ., Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. IV, Ե., 1965, էջ 237-245, Мамиконян К., Большевицские организации Закавказья в период реакции и нового революционного подъема (1907-1914 гг.), Ер., 1973, с. 219-220, նույնի՝ В. И. Ленин и большевицские организации Закавказья 1893-1907, Ер., 1961, с. 94-95, Ավետիսյան Վ., Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Ե., 1976, էջ 507-508, Ամիրյան Ս., Ալեքսանդր Մյասնիկյան, Ե., 1986, էջ 88-95, Հարությունյան Շ. Ռ., Պատմագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում 1920-1963, ուրվագծեր, Ե., 1967 և այլն: Ուշագրավ է, որ Շ. Հարությունյանն իր գրքում մի քանի տեղ Դ. Անանունի անվան սոսկ հիշատակությունից բացի նրա մասին ոչինչ չգրելով հանդերձ՝ Հ. Էլչիբեկյանին քննադատում է այն բանի համար, որ վերջինս 1963 թ. Մոսկվայում հրատարակված «Очерки истории исторической науки в СССР» գրքի 3-րդ հատորում չի քննադատել դաշնակցական, սպեցիֆիկյան, կղերական պատմագրության առանձին ներկայացուցիչների (Մ. Վարանդյան, Դ. Անանուն, Ե. Գեղամյան) պատմագիտական աշխատությունները: Տե՛ս Հարությունյան Շ., նշվ. աշխ., էջ 358:

<sup>5</sup> Տե՛ս Գիլխանդանեան Ա., Բագուի դերը մեր ազատագրական շարժման մեջ, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1924, N 8, հունիս, 1925, N 4, փետրվար, Խան-Ազատ Ռ., Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, 1929, N 6, ապրիլ, Աստուածատրեան Ա., Անջատական շարժումները Հ. Յ. Դաշնակցութեան մեջ, «Հայրենիք» ամսագիր, 1939, N 1, նոյեմբեր, Մինախորեան Վ., Անջատականներ, «Վեմ», Փարիզ, 1933, Ա, սեպտեմբեր-հոկտեմբեր, Գիլխանդանեան Ա., Հայ-թաթարական ընդհարումները, Փարիզ, 1933, Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Դ, Պեյրուք, 1965, հ. 2, Պեյրուք, 1967, Տասնապետեան Հ., Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ Ընդհ. ժողով (1890-1924), Աթէնք, 1988: Դ. Անանունի աշխատության երկրորդ և հիմնականում երրորդ հատորների վերաբերյալ գրախոսականներ են տպագրել Ս. Մասուրյանը (Ս. Վրացյան)՝ Փարիզի «Յառաջ»-ի 1926 թ. հոկտեմբերի 22-ի (թիվ 192), 24-ի (թիվ 193), 29-ի (թիվ 195) և 31-ի (թիվ 196) համարներում, Արտ. Աբեղյանը՝ Կահիրեի «Յուսաբեր»-ի 1926 թ. սեպտեմբերի 30-ի, հոկտեմբերի 1-ի, 14-ի, 15-ի, 18-23-ի, 28-29-ի, նոյեմբերի 4-ի, 13-ի, 29-ի, 30-ի, դեկտեմբերի 1-4-ի ու 6-ի համարներում և Մ. Վարանդյանը՝ Բոստոնի «Հայրենիք» ամսագրի 1926 թ. 1-ին, 2-րդ (նոյեմբեր, դեկտեմբեր) ու 1927 թ. 3-րդ (հունվար) համարներում:

տողների համար օտար Դ. Անանունը մնացել է ստվերում, մինչդեռ այդ ուժերին հարող և իրենց կարողություններով ու թողած գիտական վաստակով ավելի համեստ գործիչները մեծարվել են. ուսումնասիրվել են նրանց կյանքն ու գործը, գիտական աշխատանքները: Այժմ, անշուշտ, առկա են դրական տեղաշարժեր: Դ. Անանունի գործունեությանը և գիտական ժառանգության որոշ շերտերի անդրադարձել են առանձին ուսումնասիրողներ<sup>1</sup>, բայց հրապարակումների փոքրածավալ լինելը, որոշ դեպքերում դրանց վրա անցյալի մտայնության ազդեցությունը թույլ չեն տալիս այդ ուղղությամբ ցայսօր կատարվածը բավարար գնահատել:

Արդի փուլում անհրաժեշտ է հաղթահարել անցյալի քաղաքական ու գաղափարախոսական կարծրատիպերը և ապաքաղաքական, օբյեկտիվ մոտեցմամբ ուսումնասիրել, արժևորել ու վերագնահատել հայագիտության զարգացման գործում զգալի ներդրում ունեցած գործիչների, մասնավորապես Դավիթ Տեր-Դանիելյանի, անցած ճանապարհն ու գիտական ժառանգությունը: Ելնելով այդ հրամայականից, սույն ուղենշային հոդվածով նպատակ է դրվում համառոտ ներկայացնելու Դ. Անանունի կյանքն ու գործունեությունը և դրանով իսկ ազդարարվում առաջիկա տարիներին նրա և՛ կյանքի ու գործունեության, և՛ գիտական ժառանգության ուսումնասիրության գործընթացի սկիզբը:

Դավիթ Տեր-Դանիելյանը ծնվել է 1880 թ. մարտի 2-ին<sup>2</sup> Ելիզավետպոլի նահանգի Ջևանշիրի գավառի Մեծչեն գյուղում (Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջան), հողագործի ընտանիքում<sup>3</sup>: Դավիթն ընտանիքի կրտսեր զավակն էր, ուներ երկու քույր և մեկ եղբայր, որոնք բոլորն էլ 1920-ական թթ. վերջերին ապրում էին գյուղում և զբաղվում գյուղատնտեսությամբ<sup>4</sup>: Դավիթի մեջ ուսման նկատմամբ հետաքրքրություն նկատելով և, թերևս, գյուղական կյանքի ծանր աշխատանքից հեռու պահելու նպատակով ծնողները նրան ուղարկում են Շուշի կրթություն ստանալու համար: Նա սովորում է Շուշիի քաղաքային դպրոցում<sup>5</sup>,

<sup>1</sup> Տե՛ս Վիրաբյան Ա., Կյանք և ողբերգություն, «Հայաստան», Ե., 20 հունիսի 1991, N 107: Աբրահամյան Հ., Հայ գրողների նամակները Դավիթ Անանունին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2001, N 2, էջ 198-213, նույնի՝ Դավիթ Անանունի քաղաքական ճակատագիրը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1998, N 1, էջ 19-30: Մանուկյան Ա., Գրականագետ Դ. Անանունը Դաշնակցության համախոհ (1927 թ.), «Հայոց աշխարհ», Ե., 1999, N 63: Հակոբյան Ա., «Սպեցիֆիկները» Հայաստանի Հանրապետությունում (1918-1920 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 1997, N 3, էջ 15-24, նույնի՝ «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպություն՝ «Սպեցիֆիկներ»», «Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885-1914 թթ.)», Ե., 2003, էջ 177-200: Օհանյան Ս., 20-րդ դարի սկզբի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն (Երվանդ Ֆրանգյան, Դավիթ Անանուն), «Փիլիսոփայության պատմություն» մասնագիտությամբ փիլ. գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Ե., 2008: Զաքարյան Ա., Արամայիսի (Միսաք Տեր-Դանիելյան) հուշերը Դ. Անանունի մասին, «Պատմաբանասիրական հանդես», Ե., 2010, N 1, էջ 245-253: Հակոբյան Վ., Դավիթ Անանունի հուշերը Ստեփան Շահումյանի մասին, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), Գ, Ե., 2012, էջ 123-135, նույնի՝ «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ձևավորումը և առաջին քայլերը», Ե., 2015 և այլն:

<sup>2</sup> Դ. Անանունի մասին կենսագրական տվյալներ պարունակող, նրա մասնակցությամբ կազմված հայտնի միակ փաստաթուղթը նրա քրեական գործում առկա անկետան է: Դրանում նրա ծննդյան թվականը նշված է 1880 թ.: Այլ հեղինակների կողմից հիշատակվող 1879 թվականի սկզբնաղբյուրը մեզ հայտնի չէ:

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1191, ց. 13, գ. 670, թ. 2:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>5</sup> Խոսքը Շուշիի ռեալական դպրոցի մասին է, որը սկսել է գործել 1881 թ. սեպտեմբերից: Այս դպրոցը գործում էր 1880 թ. օգոստոսին ընդունված «Անդրկովկասի ուսումնարանների կանոնադրության» հիման վրա: Ուսման տևողությունը յոթ տարի էր, որից երկուսը նախապատրաստական: Վեցերորդ դասարանն ավարտելուց հետո աշակերտները ստանում էին հասունության, յոթերորդից հետո՝ ավարտական վկայական: Բացառությամբ կրոնական առարկաների՝ բոլոր առարկաները դասավանդվում էին ռուսերենով (միայն ռուսաստանյան Առաջին հեղափոխության շրջանում՝ 1906 թ. է թույլատրվել հայոց լեզվի, պատմության ու գրականության հայերենով դասավանդումը): Առարկայացանկում ներառված են եղել ռուսերենը, մաթեմատիկան, պատմությունը (Ռուսաստանի), բնագիտությունը, աշխարհագրությունը, ֆրանսերենը, գերմաներենը, գծագրությունը և գեղագիտությունը: Հավելելնք, որ թեև դպրոցը պետական կայուն ֆինանսավորում է ունեցել, սահմանված են եղել նաև տարեկան որոշ վճարներ, ունևորների համար՝ 16 ռուբլի, չքավորների համար՝ 9-10 ռուբլի: Առավել անապահովների համար տարբեր աղբյուրների, այդ թվում բարեգործական կազմակերպությունների միջոցով անվճար ուսուցման հնարավորություն էր տրվում: Տե՛ս Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, Ստեփանակերտ, 2014, հ. 1, էջ 405-410:

որտեղ ուսուցումը ռուսերենով էր<sup>1</sup>: Ուսման ընթացքում նա այնքան լավ է տիրապետել ռուսերենին (գուցե մասամբ նաև ֆրանսերենին, գերմաներենին), որ հետագայում ռուսերենից հայերեն է թարգմանում մի շարք հեղինակների (Վ. Վոլկենշտեյն, Տան, Է. Վերհարն, Հ. Հայնե և այլն) բանաստեղծություններ: Ավելին, իր համար ծանր 1920-ական թթ. երկրորդ կեսին Ա. Մռավյանի առաջարկությամբ թարգմանություններ կատարելով կարողանում է պահպանել իր գոյությունը<sup>2</sup>:

Ցավոք, Դ. Անանունը հնարավորություն չի ունենում շարունակելու ուսումը, քանի որ ստիպված էր աշխատել, որպեսզի օգնի իր ընտանիքին: Հետագա տարիներին նա կրթության բացը լրացնում է ինքնակրթությամբ: Խոսելով նրա մասին՝ դաշնակցական հեղինակ Արամայիսը (Միսաք Տեր-Դանիելյան) իր հուշերում գրում է, որ Դ. Անանունը մեծ կրթություն չի ստացել, բայց բնածին, արտասովոր ընդունակությունների և ինքնակրթության շնորհիվ կարողացել է լուրջ առաջընթաց ապրել: Ըստ Արամայիսի՝ նա անգամ շատ բարդ տեքստերն արագ էր ըմբռնում, ուներ փայլուն հիշողություն և քայլող հանրագիտարան էր<sup>3</sup>: Ինքնակրթությամբ զբաղվելու Դ. Անանունի մղման մասին է վկայում նաև այն, որ «Մշակ»-ում տպագրված իր, մեզ հայտնի, առաջին հոդվածում նա դժգոհում է Բաքվի հայերին պատկանող գրախանութներից, որոնցում հայ գիրքը գրեթե ներկայացված չէր, և դրանցից որոշները մտավորականների համար պիտանի չէին<sup>4</sup>:

Դարոցից հետո, ելնելով սոցիալական պայմաններից, Դ. Տեր-Դանիելյանը որոշում է մեկնել արտագնա աշխատանքի: Տրամաբանական է, որ ընտանիքում նման աշխատանքի գնալու ամենահարմար թեկնածուն նա էր, քանի որ միակն էր, ով կրթվածությամբ, պետական լեզվի իմացությամբ ի վիճակի էր դյուրությամբ հարմարվելու նոր միջավայրի և ոչ միայն աշխատանք գտնելու, այլև ապահովելու առաջխաղացում:

XIX դ. վերջին Ղարաբաղի, Գանձակի և Ջանգեզուրի հայ գյուղացիներն արտագնա աշխատանքի համար, որպես կանոն, մեկնում էին Բաքու: Բանն այն է, որ նույն դարի վերջին երեսնամյակում Բաքուն, շնորհիվ նավթարդյունաբերության թռիչքային զարգացման, դարձել էր խոշոր արդյունաբերական կենտրոն և, բնականաբար, մշտապես նոր աշխատող ձեռքերի կարիք էր զգում: Արցախի և վերոնշյալ այլ շրջանների սակավահող հայ գյուղացիները Բաքվում տեսնում էին դրամ վաստակելու և իրենց ընտանիքների սոցիալական դրությունը բարելավելու հնարավորություն, ուստի շատ հայ երիտասարդներ մեկնում էին այնտեղ աշխատելու<sup>5</sup>: Դավիթ Տեր-Դանիելյանը նրանցից մեկն էր:

1898 թ. Դ. Անանունն արդեն աշխատում էր Բաքվի Բալախան քաղաքամասում<sup>6</sup>: Ըստ Արամայիսի հուշերի՝ նա աշխատել է Թումանյան եղբայրների նավթահանքերի գրասենյակում: Թե այնտեղ որոշակի ինչով է զբաղվել Դ. Անանունը, հայտնի չէ: Ռուսաստանյան Առաջին հեղափոխությունից հետո՝ 1908 թ. սեպտեմբերից մինչև 1918 թ. հուլիսը, Դ. Տեր-Դանիելյանը Բաքվում աշխատել է Նավթարդյունաբերողների խորհրդին կից գործող Բանվորների և ծառայողների վնասվածքների վկայման բյուրոյում՝ որպես քարտուղար<sup>7</sup>:

Այժմ անդրադառնանք Դ. Անանունի քաղաքական հայացքների էվոլյուցիային, նրա հասարակական-քաղաքական գործունեությանը:

1923 թ. Հնչակյան կուսակցության գործունեության վերաբերյալ իր հրապարակման մեջ Դ. Անանունը նշում է, որ աշակերտական սեղանից հարել է Դաշնակցությանը<sup>8</sup>: Նրա խոսքե-

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 13, գ. 670, թ. 2, Հուշեր Դավիթ Անանունի մասին (Ծննդյան 130-ամյակի կապակցությամբ), առաջաբանը և ծանոթագր.՝ Ա. Ջաքարյանի, «Պատմաբանասիրական հանդես», Ե., 2010, N 1, էջ 246:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 13, գ. 670, թ. 41:

<sup>3</sup> Հուշեր Դավիթ Անանունի մասին (Ծննդյան 130-ամյակի կապակցությամբ), առաջաբանը և ծանոթագր.՝ Ա. Ջաքարյանի, «Պատմաբանասիրական հանդես», Ե., 2010, N 1, էջ 247:

<sup>4</sup> Տե՛ս Տեր-Դանիելյանց Դ., Նամակ Բագուից, «Մշակ», Թիֆլիս, 1902, N 61, մարտի 20, էջ 2:

<sup>5</sup> Մանրամասն տե՛ս Հակոբյան Վ., Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ձևավորումն ու առաջին քայլերը, Ե., 2015, էջ 8-18:

<sup>6</sup> Տե՛ս Հնչակյանների հարումը Ռուսաստանի հեղափոխությանը և սոցիալիզմին, ծանոթությունները և վավերագրերը Դ. Անանունի, «Նորք», Ե., 1923, գիրք երկրորդ, հունվար-մարտ, էջ 278:

<sup>7</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 13, գ. 670, թ. 2, նաև՝ Անանուն Դ., Նավթարդյունաբերական հայ բանվորի նկարագրի մասին, «Նոր հոսանք», Թիֆլիս, 1913, N 4-5, յունիս-յուլիս, էջ 842-843:

<sup>8</sup> Տե՛ս Հնչակյանների հարումը Ռուսաստանի հեղափոխությանը և սոցիալիզմին», ծանոթությունները և վավերագրերը Դ. Անանունի, «Նորք», Ե., 1923, գիրք երկրորդ, հունվար-մարտ, էջ 278:



րով, 1898 թ. Բալախանի նավթահանքի գրասենյակում աշխատանք գտնելով, ինքը նորից համակվել է այդ գաղափարով և 3-4 տարի, որպես ՀՅԴ անվանական անդամ, անդամավճար վճարել<sup>1</sup>: Հարկ է նշել, որ մի շարք հայտնի դաշնակցականներ (Ս. Վարանդյան, Ս. Վրացյան, Ա. Աբեղյան) 1920-ական թթ. կեսերին տեղեկություն չեն ունեցել Դ. Անանունի՝ երբևէ դաշնակցական լինելու մասին, թեև կարող էին ճշտել այդ փաստը: Նրանք Դ. Տեր-Ղանիելյանի հայտնի աշխատության երրորդ հատորի կապակցությամբ նրա մասին խոսելիս նշում են, որ նա միշտ էլ («առաջիգունե») Դաշնակցության հակառակորդ է եղել<sup>2</sup>: Մինչդեռ Արամայիսը պատմում է, որ 1890-ական թթ. վերջին Բաքվում միմյանցից ոչ հեռու գտնվող վայրերում աշխատելով, Դ. Անանունի հետ ծանոթացել, հաճախակի հանդիպել և մտերմացել են: Ըստ նրա՝ 1899 թ. լինելով դաշնակցականներ և Կովկասում բանվորական շարժումներին մասնակցելու մտայնության կրողներ՝ միասին հրատարակել են «Բանվոր» խորագրով ձեռագիր երկշաբաթաթերթ<sup>3</sup>: Ընդ որում՝ Դ. Անանունը թերթի համար գրել է դասակարգային պայքար քարոզող թարգմանված ու ինքնուրույն հոդվածներ<sup>4</sup>: Վստահորեն կարելի է արձանագրել, որ 1890-ական թթ. երկրորդ կեսից մինչև 1903 թ. նա եղել է, գուցե ոչ այնքան աչքի ընկնող, բայց դաշնակցական:

Հետագայում Դաշնակցությունից իր հեռանալը Դ. Անանունը բացատրում է 1901-1902 թթ. ռուսական շարժումների ազդեցությամբ դաշնակցականների մեջ սկսված սթափման գործընթացով: Ըստ նրա՝ այդ շրջանում Բալախանի մի շարք երիտասարդ դաշնակցականների հետ (Թ. Խզմայյան, Արամայիս, հայ-թաթարական կռիվների ժամանակ Ջանգեզուրի հերոս Ստ. Ստեփանյան) իրենք սկսում են խոսել ռուսական շարժումներին մասնակցելու անհրաժեշտության մասին: Դա անհանգստացնում է կուսակցության ղեկավարությանը: Հ. Շահրիկյանը և դաշնակցական այլ ղեկավար գործիչներ փորձում են խեղդել այդ շարժումը: Անգամ այնտեղ է հրավիրվում Ա. Ահարոնյանը, ով իր հռետորական ձիրքով շատերին համոզում է, որ իրենք պետք է հավատարիմ մնան Թուրքահայաստանի ազատագրության գործին<sup>5</sup>: Դաշնակցության նման դիրքորոշումը Դ. Անանունին ստիպում է սառել կուսակցությունից և 1903 թ. դառնալ սոցիալ-դեմոկրատ՝ առանց հարելու ՌՍԴԿ-ին<sup>6</sup>:

Դ. Անանունի Դաշնակցությունից հեռանալու հանգամանքների վերաբերյալ արված դիտարկումները պատմագիտական տեսանկյունից տիպական են, քանի որ 1890-ական թթ. կեսերից հայ ազգային-ազատագրական պայքարի մարտավարությունը մի կողմից՝ իրոք, ձգնաժամի է հանգեցնում, իսկ 1898 թ. ՀՅԴ երկրորդ ընդհանուր ժողովի կողմից ընդունված նոր մարտավարությունը<sup>7</sup> ոչ բոլորին է գոհացնում, մյուս կողմից՝ տարբեր ձանապարհներով Այսրկովկաս ներթափանցող ու տարածվող մարքսիստական գաղափարները, սոցիալ-դեմոկրատական քաղաքական, բանվորական շարժումները սկսում են դեպի իրենց գրավել դաշնակցական երիտասարդությանը: Նման պայմաններում Դաշնակցության ներսում տեղի է ունենում պառակտում: Մի խումբ երիտասարդ դաշնակցականներ, դուրս գալով կուսակցությունից և միավորվելով այլ անձանց հետ, 1903 թ. աշնանը Բաքվում ստեղծում են Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը (ՍԴԲՀԿ)<sup>8</sup>:

Որքան էլ տարօրինակ է, Դ. Անանունը, ով վերոնշյալ պատճառներով ՀՅԴ-ից հեռացածներից էր, անդամակցում է ոչ թե ՍԴԲՀԿ-ին, այլ՝ Հնչակյան կուսակցությանը: Վերջինիս շարքերում նա մնում է երկու տարուց փոքր-ինչ ավելի՝ 1903 թ. կեսերից մինչև 1905 թ. վեր-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>2</sup> Տե՛ս Վարանդեան Ս., Անաչառութեան ասպետները, «Հայրենիք» ամսագիր, 1926, N 1, նոյեմբեր, էջ 69: Մատուրեան Ս. (Ս. Վրացյան), Ռուսահայոց հասարակական զարգացումը III, Նեղմիտ եւ աչառու դատաստան, «Յառաջ», Փարիզ, 1926, N 195, հոկտեմբերի 29, թ. 2: Աբեղյան Արտ., Երեք տարբեր դատախազներ, «Յուսաբեր», Գահիրէ, 1926, N 153, սեպտեմբերի 29, էջ 1:

<sup>3</sup> Տե՛ս Հուշեր Դավիթ Անանունի մասին (Ծննդյան 130-ամյակի կապակցությամբ), առաջաբանը և ծանոթագր.՝ Ա. Զաքարյանի, «Պատմաբանասիրական հանդես», Ե., 2010, N 1, էջ 246:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>5</sup> Հնչակյանների հարումը Ռուսաստանի հեղափոխությանը և սոցիալիզմին, ծանոթությունները և վավերագրերը Դ. Անանունի, «Նորք», Ե., 1923, գիրք երկրորդ, հունվար-մարտ, էջ 278:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 279:

<sup>7</sup> Մանրամասն Տե՛ս Գրիգորյան Հ., Հայ ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-1898 թթ., Ե., 2002:

<sup>8</sup> Մանրամասն տե՛ս Հակոբյան Վ., Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ձևավորումն ու առաջին քայլերը, էջ 8-67:

ջերը: Այդ շրջանում Դ. Անանունն առավել հայտնի է դառնում որպես քարոզիչ ու հատկապես հրապարակախոս: Նա Ջրաբերոյան ծածկանունով հանդես է գալիս Ավետիս Նազարբեկյանի կողմից Բուլղարիայի Ռուսչուք քաղաքում 1903-1904 թթ. հրատարակվող «Վերածնություն» թերթում<sup>1</sup>: Ա. Նազարբեկյանը և նրա համախոհները այդ թերթում ավետում էին իրենց կուսակցության նոր գործունեության սկիզբը՝ Այսրկովկասում հանդես գալով որպես սոցիալիստական, հեղափոխական կուսակցություն: Հնչակյան կուսակցության պատմությանը վերաբերող հրապարակման առաջաբանում Դ. Անանունը նշում է, որ հեռանալով ՀՅԴ-ից ծանոթացել ու անցել է Բիբի Հեյբաթի հնչակյան բանվորաշատ, սոցիալիստական գործունեություն ծավալող կազմակերպության շարքերը<sup>2</sup>: Նա պատմում է, որ կարճ ժամանակ անց սկսել է դասախոսել հնչակյան խմբերում, թղթակցել «Վերածնության»-ը: Շուտով հնչակյանների մեջ նրա հեղինակությունն այնքան է աճել, որ 1904 թ. դեկտեմբերյան գործադուլի ժամանակ ընտրվել գործադուլային կոմիտեի անդամ<sup>3</sup>:

Ինչ վերաբերում է Դ. Անանունի հրապարակախոսական գործունեությանը, որը նա, թերևս, սկսել է «Մշակ»-ում<sup>4</sup>, ապա «Վերածնություն» թերթում Դ. Անանունը հանդես է եկել հինգ հոդվածով և տպագրել մեկ բանաստեղծության թարգմանություն<sup>5</sup>: Հոդվածներում հիմնականում շոշափվում են ազգային, հասարակական խնդիրներ, որոնցից շատերն, ի դեպ, այսօր էլ ունեն արդիական հնչեղություն: Այսինքն՝ Ջրաբերոյան-Անանունը նեղ կուսակցական, տեսական կամ բանավիճային բնույթի թղթակցություններ, հոդվածներ չի գրել: Այդ գործը հիմնականում կատարել են Ա. Նազարբեկյանը, Ռ. Խանազատը, Ս. Կասյանը և այլք:

Այսուհանդերձ, Դ. Անանունը Հնչակյան կուսակցության շարքերում երկար չի մնում: Այդ կուսակցությունից իր հեռանալը հետագայում նա պատճառաբանել է հնչակյանների սոցիալիզմից խոսելու, բայց Հայկական հարցի միջոցով ազգայնականության շղթաներով կաշկանդված մնալու հանգամանքով<sup>6</sup>: Կարծում ենք, որ Հնչակյան կուսակցությունից Դ. Անանունի հեռանալուն էապես նպաստել է նաև 1905 թ. սեպտեմբերին Փարիզում կայացած Հնչակյան կուսակցության հինգերորդ պատգամավորական ժողովի ընդունած որոշումը, որով մերժվում էր Կովկասի և Ռուսաստանի հնչակյան կազմակերպությունները Թուրքիայի հեղափոխական շարժումներից անջատելու, ՌՍԴԲԿ «մենչևիկներ» կոչված մասի մարտավարությունն ու կազմակերպական ձևը ընդունելու և որպես կազմակերպություն՝ նրանց հետ ձուլվելու առաջարկը<sup>7</sup>: Ընդունված որոշումը բացասաբար է անդրադառնում կուսակցության կովկասյան մարմինների վրա: Դ. Անանունի վկայությամբ, 1905 թ. վերջին Բաքվի հնչակյանները բա-

<sup>1</sup> Տե՛ս Հնչակյանների հարումը Ռուսաստանի հեղափոխությանը և սոցիալիզմին, ծանոթությունները և վավերագրերը Դ. Անանունի, «Նորք», Ե., 1923, գիրք երկրորդ, հունվար-մարտ, էջ 279:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>4</sup> Վերևում արդեն հիշատակել ենք, որ Դ. Անանունի մեզ հայտնի առաջին տպագիր հոդվածը «Մշակ»-ում լույս է տեսել 1902 թ. մարտին: Սկսած 1903 թվականից, նա մի քանի տարի ավելի հաճախակի է տպագրվել «Մշակ»-ում: Տե՛ս 1903 թ., N 28, 35, 42, 45, 47, 182, 192, 207, 1904 թ., N 234, 1905 թ., N 27, 35, 39, 74, 135, 151, 1906 թ., N 55, 136, 173: Հրապարակված հոդվածները բովանդակային առումով առանձնապես հետաքրքրական չեն: Դրանցում ներկայացվում են Բաքվի կյանքի որոշ կողմեր, առանձին իրադարձություններ: Այս շրջանում նա «Մշակ»-ում հիմնականում հանդես է եկել Դ. Տեր-Ղանիեյան կամ Դ. Տեր-Ղանիեյանց ստորագրությամբ, այսինքն՝ իր իսկական ազգանունով:

<sup>5</sup> Տե՛ս Ջրաբերոյան, Նամակ Ջրաբերոյից, «Վերածնություն», Ռուսչուք, 1903, N 15, սեպտեմբերի 23/6 հոկտեմբերի, էջ 6, N 16, սեպտեմբերի 30/հոկտեմբերի 13, էջ 6: Ջրաբերոյան, անվերնագիր է, «Վերածնություն», 1904, N 35, փետրվարի 10/23, էջ 4: Ջրաբերոյան, Մեր անկողոպտելի իրավունքները, «Վերածնություն», 1904, N 39, մարտի 9/22, էջ 2: Ջրաբերոյան, Ռուսահայ մամուլ, «Վերածնություն», 1904, N 40, մարտի 16/29, էջ 2: Ջրաբերոյան, Հայրենասեր գործիչներ, «Վերածնություն», 1904, N 43, ապրիլի 13/26, էջ 3: Վոլկենշտեյն, Գործարանում, թարգմանությունը Ջրաբերոյանի, «Վերածնություն», 1904, N 51, հունիսի 8/21, էջ 3:

<sup>6</sup> Տե՛ս Հնչակյանների հարումը Ռուսաստանի հեղափոխությանը և սոցիալիզմին, ծանոթությունները և վավերագրերը Դ. Անանունի, «Նորք», Ե., 1923, գիրք երկրորդ, հունվար-մարտ, էջ 279:

<sup>7</sup> Տե՛ս Հովհաննիսյան Գ., Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն, Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885-1914 թթ.), էջ 47, Անանուն Դ., նշվ. աշխ., հ. 3, էջ 123:

ժան-բաժան են եղել՝ անցնելով ՍԴԲՀԿ կամ ՌՍԴԲԿ շարքերը<sup>1</sup>: Այդ երկրնտրանքի առջև Դ. Անանունը որոշում է միանալ ՍԴԲՀԿ-ին<sup>2</sup>:

Հնչակյանների հետ հարաբերությունները դադարեցնելու և ՍԴԲՀԿ-ին անդամակցելու գործընթացը, հավանաբար, սկսվել է մինչև վերոհիշյալ համագումարի որոշումը, քանի որ ՍԴԲՀԿ «Սօցիալիստ» պաշտոնաթերթում Դ. Անանունի առաջին հոդվածը լույս է տեսել 1905 թ. հոկտեմբերի 14-ի համարում<sup>3</sup>: Այլապես դժվար կլիներ այդքան կարճ ժամանակում ինտեգրվել կուսակցությանը և ժնկում տպագրվող թերթում հոդված հրատարակել, եթե, ի-հարկե, հոկտեմբերի 14-ի համարը իրականում ավելի ուշ չի տպագրվել:

Դաշնակցություն և Հնչակյան կուսակցություններից հետո Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը Դ. Անանունի համար դառնում է այն հանգրվանը, որը նա երբեք չի լքում: Ավելին՝ համեմատաբար ուշ միանալով այդ կուսակցությանը՝ Դ. Անանունը կարողանում է ոչ միայն կարճ ժամանակում դառնալ նրա ղեկավարներից ու գաղափարախոսներից մեկը, այլև մի տեսակ խորհրդանշել այդ կուսակցությունը: Պատահական չէ, որ 1916 թ. Դ. Անանունին ուղղված նամակում Աշոտ Հովհաննիսյանը գրում էր, որ եթե իրենց առնչությունը ՍԴԲՀԿ-ի հետ եղել է նախևառաջ գրական, գաղափարական, ապա նրանը՝ իրական ու կենսական<sup>4</sup>:

Դ. Անանունը ՍԴԲՀԿ շարքերն է անցնում բավականին բարդ ժամանակաշրջանում. հայ-թաթարական կռիվներ, ռուսաստանյան Առաջին հեղափոխություն<sup>5</sup>:

ՍԴԲՀԿ կազմում Դ. Անանունի գործունեության առաջին տարիների մասին տեղեկություններն առանձնապես շատ չեն: Այդ մասին մեր պատկերացումները հիմնականում ձևավորվում են վերոնշյալ թերթերում «Նորեկ» ծածկանունով հրապարակած նրա հոդվածների ու տարբեր հեղինակների բանաստեղծությունների թարգմանությունների միջոցով:

Սոցիալական արդարության հասարակություն ձևավորելու, դրա համար պայքարելու նրա ձգտումն արտացոլվում է ինչպես նրա հասարակական-քաղաքական գործունեության մեջ, այնպես էլ տպագրված աշխատանքներում:

Տվյալ փուլում հայերի համար առաջնային նշանակություն ունեին հայ-թաթարական կռիվները: Բնավ պատահական չէ, որ ՍԴԲՀԿ պաշտոնաթերթում Դ. Անանունի տպագրած առաջին հոդվածը վերաբերում էր հենց այդ խնդրին:

Որպես ՍԴԲՀԿ նոր անդամ, Դ. Անանունը սկզբում խուսափում էր նեղ կուսակցական (մարտավարություն, ռազմավարություն, միջկուսակցական հարաբերություններ) թեմաներով հոդվածներ գրել: Նրա հրապարակախոսական գործունեության կարևոր բաղկացուցիչներից էին բանվորական կյանքի տարբեր երևույթների քննարկումը, խնդիրների վերհանումը, ինչ-

<sup>1</sup> Տե՛ս Անանուն Դ., նշվ. աշխ., հ. 3, էջ 124:

<sup>2</sup> Տե՛ս «Հնչակյանների հարումը Ռուսաստանի հեղափոխությանը և սոցիալիզմին», ծանոթությունները և վավերագրերը Դ. Անանունի, «Նորք», Ե., 1923, գիրք երկրորդ, հունվար-մարտ, էջ 279:

<sup>3</sup> Տե՛ս Նորեկ, Բաքվի վերջին դէպքերը, «Սօցիալիստ», ժընեւ, 1905, N 11, հոկտեմբերի 14, էջ 4:

<sup>4</sup> Տե՛ս Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Դ. Անանունի և Բ. Իշխանյանի ֆոնդ, N 74, թ. 2:

<sup>5</sup> Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունն այդ փուլում, լինելով մարդկային և նյութական ռեսուրսներով ոչ մեծ, սահմանափակ կազմակերպություն, լայնածավալ հեղափոխական գործունեություն չի ծավալում և հեղափոխական գործընթացների վրա մեծ ազդեցություն չի ունենում: Դրանով հանդերձ, նրա գործունեությունը զգալի էր Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում, Շուշիում և հիմնականում կրում էր քարոզչական, կազմակերպական բնույթ: Այս շրջանում ժնկում շարունակում է լույս տեսնել «Սօցիալիստ»-ը, հրատարակվում են նոր «Կեանք», «Չայն», «Բանւոր» շաբաթաթերթերը: Սպեցիֆիկներն իրենց տպարանում տպագրում և տարածում են բազմաթիվ կոչեր, հայտարարություններ, կազմակերպում ժողովներ, ցույցեր, կարդում դասախոսություններ, մասնակցում բանավեճերի և այլն: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 12, թ. 1, գ. 13, թ. 2, գ. 15, թ. 1-4, գ. 20, թ. 35-43, գ. 22, թ. 1-4, գ. 23, թ. 1, գ. 36, թ. 1, գ. 38, թ. 1, գ. 39, թ. 2, «Չայն», 1906, N 5, հոկտեմբերի 29, էջ 70, N 6, նոյեմբեր 5, էջ 91, 1907, N 1, հունվարի 6, էջ 223, «Նոր խօսք», Թիֆլիս, 1906, օգոստոսի 31: Հայ-թաթարական կռիվների կապակցությամբ սպեցիֆիկները քարոզչական ուղղությամբ, բայց, ամբողջությամբ մեջ վերցրած, նրանց համար գաղափարական առումով առավել հոգեհարազատ և ընդունելի էին հայ և թուրք պրոլետարների հաշտությունը և համերաշխ-համատեղ պայքարն ընդդեմ ցարական ինքնակալության: Մանրամասն տե՛ս Հակոբյան Վ., Սպեցիֆիկների դիրքորոշումը հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2008, N 2, էջ 10-15:

պես նաև բանվորներին իրենց իրավունքների համար պայքարի մղելը<sup>1</sup>: Այդ առումով առանձնանում է հատկապես նրա «Գործարանային կյանքից» շարքը<sup>2</sup>:

Դ. Նորեկի հեղափոխության շրջանի գործունեության յուրօրինակ ձևերից էին օտար բանաստեղծների մասամբ գրական, մասամբ քարոզչական բնույթ կրող ստեղծագործությունների թարգմանությունները<sup>3</sup>: Նա իր թարգմանությունները հիմնականում տպագրում էր կուսակցական մամուլում: Սա մի գործունեության էր, որ Դ. Անանունը սկսել էր դեռևս հնչակյանների շարքերում<sup>4</sup> և շարունակում էր հետագա տարիներին<sup>5</sup>: Բնավ նպատակ չունենալով մտնել գիտության այլ ոլորտներ և չհավակնելով գնահատել նրա թարգմանությունների որակը, լոկ փաստում ենք, որ այդ բանաստեղծություններն ունեին սոցիալական ուղղվածություն, շոշափում էին սոցիալական խնդիրներ և զանգվածներին ոգևորում ու մղում էին պայքարի:

Այսպիսով, Դ. Անանունը հայ իրականության մեջ առաջիններից էր, որ հասարակական-քաղաքական պայքարում քարոզչության նպատակով օգտագործում է նաև գեղարվեստական ստեղծագործություններ՝ բանաստեղծություններ:

Հավելենք, որ 1907 թ. ՍԴԲՀ Բաքվի կոմիտեն տպագրում է «Մայիսի մեկը» վերտառությամբ քարոզչական բնույթի հոդվածների մի ժողովածու, որտեղ Նարինան Տեր-Ղազարյանի, Ալ. Մյասնիկյանի, Հակոբ Հովհաննիսյանի (Նեոֆիտ) հետ մեկտեղ «Ուր ժամեայ բանուորական օր» վերտառությամբ հոդվածով և բանաստեղծության թարգմանությամբ հանդես է գալիս Դ. Տեր-Ղանիելյանը<sup>6</sup>: Հոդվածում, բերելով առողջապահական, ինքնազարգացման, ժամանցի անհրաժեշտության, գործազրկության և քաղաքական հիմնավորումներ, հեղինակը նշում է, որ ութամյա աշխատանքային օրն օդ ու ջրի պես անհրաժեշտ է բանվորներին, ուստի մայիսի մեկին նրանք պահանջել ու պահանջում են ութամյա աշխատանքային օր<sup>7</sup>: Ժողովածուում նրա հոդվածը զետեղված է երկրորդը, Նարինան Տեր-Ղազարյանի հոդվածից հետո, ինչը, կարծում ենք, խոսում է կուսակցության ներսում նրա դիրքի բարձրացման մասին:

Այսպիսով՝ հեղափոխության շրջանում Դ. Անանունը զգալի առաջընթաց է ապահովում, հաջողության հասնում քաղաքական, հասարակական և մշակութային ոլորտներում՝ դառնալով ՍԴԲՀ ազդեցիկ քաղաքական գործիչներից մեկը, ճանաչված հրապարակախոս և հասարակական գործիչ: Հետագա տարիներին, հասարակական-քաղաքական իրադրության փոփոխություններին զուգահեռ, նրա գործունեության դաշտի քաղաքական, հասարակական և մշակութային բաղկացուցիչները ենթարկվում են վերադասավորումների. երբեմն առաջ են մղվում հասարակական-հրապարակախոսական, երբեմն քաղաքական, երբեմն էլ մշակութային ուղղությունները, որոնց ավելանում է նաև պատմագիտության ոլորտը, որում նա հասնում է զգալի հաջողությունների:

<sup>1</sup> Տե՛ս Նորեկ, Թղթակցութիւններ, «Կեանք», Թիֆլիս, 1906, N 3, ապրիլի 1, էջ 41, նույնի՝ Ծաղր թե արհամարհանք, «Կեանք», 1906, N 12, հունիսի 3, էջ 194-195, նույնի՝ Գծեր բանուորների կեանքից, «Սօցիալիստ», ժընեւ, 1905, N 18-19, ապրիլի 11-մարտի 29, էջ 39-50, նույնի՝ Պրոլետարիատի նոր շարքերը, «Սօցիալիստ», 1906, N 20, հունիսի 23, էջ 23-27, նույնի՝ Դիմակը վար, «Ձայն», Թիֆլիս, 1906, N 4, հոկտեմբերի 22, էջ 70-73, N 6, նոյեմբերի 5, էջ 92-94 և այլն:

<sup>2</sup> Տե՛ս «Կեանք», Թիֆլիս, 1906, N 4, ապրիլի 8, էջ 59, N 6, ապրիլի 22, էջ 96-97, N 8, մայիսի 6, էջ 127-128, «Ձայն», Թիֆլիս, 1906, N 1, հոկտեմբերի 1, էջ 14-15:

<sup>3</sup> Տե՛ս Պ. Եա-ից [Պյոտր Եակուբովիչ Լ. Մելչին (հայտնի նարոդնիկ)], անվերնագիր, «Կեանք», Թիֆլիս, 1906, N 8, մայիսի 6, էջ 123, Վոլկենշտեյն, «Հանքահանը», «Կեանք», 1906, N 10, մայիսի 20, էջ 155-156, Անդերսոն, «Զուլհակը», «Կեանք», 1906, N 12, հունիսի 3, էջ 187-188, Պ. Եակուբովիչ, «Հայրենի սահմանում», «Կեանք», 1906, N 16, հուլիսի 1, էջ 251, Ն. Մինսկ, «Լուսադեմին», «Ձայն», Թիֆլիս, 1906, N 11, դեկտեմբերի 10, էջ 106-107, Ի. Գոլց-Միլլեր, «Լսի՛ր», «Ձայն», 1907, N 3, հունվարի 20, էջ 250-251, առանց հեղինակի նշման, «Բանաստեղծություն», «Ձայն», 1907, N 6, փետրվարի 10, էջ 296-297, Է. Վերհարն, «Այստամբություն», «Ձայն», 1907, N 10, ապրիլի 1, էջ 370-373, Տան, «Մրրիկ», «Ձայն», 1907, N 13, մայիսի 6, էջ 419, Սկիտալեց, Գուսան, «Բանուոր», Բագու, 1907, N 1, փետրվարի 25, էջ 2:

<sup>4</sup> Վոլկենշտեյն, «Գործարանում» (թարգմ.՝ Զրաբերդյան), «Վերածնություն», Ռուսձուք, 1904, N 51, էջ 4:

<sup>5</sup> Տրավինով Ա., «Կռվի երգ» (թարգմ.՝ Դ. Նորեկ), «Գործ», Թիֆլիս, 1908, N 3, էջ 84, Լեոնիդ Անդուսոն, Երագ, «Շեփոր», Բագու, 1908, N 8, հոկտեմբերի 5, էջ 2, Հայրիկ Հայնե, «Շեփոր», 1908, N 11, հոկտեմբերի 26, էջ 4, Եակուբովիչ Պ., Ուշացած բերկրանք, «Շեփոր», 1908, N 13, նոյեմբերի 16, էջ 4-5, Է. Վերհարն, Սեղանավորը, «Նոր կեանք», Բագու, 1911, N 1-2, էջ 38-40 և այլն:

<sup>6</sup> ՀԱԱ, Материалы фондов Центрального государственного архива Грузинской ССР, Коллекция 3, СА-77, ф. 94, д. 135, с. 13-21, նաև՝ ֆ. 1455, г. 1, қ. 46, р. 7-10:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 94, գ. 135, ց. 17-21:

Դավիթ Անանունի՝ հեղափոխությունների միջև ընկած ժամանակաշրջանի գործունեությունը պայմանականորեն կարելի է բաժանել երեք փուլի: Առաջինն ընդգրկում է հեղափոխության պարտությունից մինչև 1910-ական թթ. կեսերը, երբ ՍԴԲՀ-ն հայտնվում է ձգնաժամի մեջ և մի քանի տարի դադարեցնում գործունեությունը: Այս ընթացքում Դ. Անանունի քաղաքական գործունեության դաշտը աստիճանաբար սահմանափակվում է: Դրա փոխարեն ակտիվանում են հրապարակախոսական-հասարակական և մշակութային գործունեությունը: Նա խմբագրում է պարբերականներ, թղթակցում այլ թերթերի, ամսագրերի, բարձրացնում արդիական հնչեղություն ունեցող մի շարք խնդիրներ: Մշակութային ոլորտում բանաստեղծությունների թարգմանություններին զուգահեռ գրում է գրական-քննադատական հոդվածներ, գրախոսություններ և այլն:

Երկրորդ փուլում, որն ընդգրկում է 1910-ական թթ. կեսերից մինչև 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունն ընկած ժամանակահատվածը, հասարակական, հրապարակախոսական գործունեությունը շարունակվում է մնալ առաջնային դիրքում, բայց մշակութային-բանասիրականի փոխարեն սկսվում ու առաջ է մղվում պատմագիտական գործունեությունը. 1914 թ. հատվածաբար, իսկ 1916 թ. ամբողջությամբ լույս է տեսնում նրա «Ռուսահայերի հասարակական զարգացումը» վերտառությամբ եռահատորի առաջին գիրքը<sup>1</sup>: Դեպի պատմագիտություն տանող նրա ճանապարհն այս փուլում սաղմնավորվում, անցնում է հրապարակախոսության, գրաքննադատության ավագանով և վերջիններից հարաբերականորեն ավելի ազատ, ինքնուրույն ձևով հանդես է գալիս միայն 1920-ական թթ.:

Երրորդ փուլն ընդհանուր առմամբ ներառում է 1917 թվականը՝ Փետրվարյան հեղափոխությունից մինչև Հոկտեմբերյան հեղաշրջում: Այս փուլում նորից առաջնային պլան է մղվում քաղաքական գործունեությունը: Փաստացի Դ. Անանունի գլխավորությամբ ՍԴԲՀ-ն վերակենդանանում է, միաժամանակ շարունակվում է նրա հրապարակախոսական գործունեությունը, իսկ բանասիրականը, գրականը մղվում է հետին պլան:

Առաջին փուլում Դ. Անանունի գործունեության մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար հարկ է համառոտ անդրադառնալ համապետական և ներկուսակցական հարթություններում տեղի ունեցած քաղաքական գործընթացներին, որոնք, ի վերջո, հանգեցրել են կուսակցության գործունեության դադարեցման և մեծ ազդեցություն ունեցել Դ. Անանունի կյանքի ու գործունեության վրա:

Ռուսական հեղափոխության մարման պայմաններում 1907 թ. հունիսին տեղի է ունենում հեղաշրջում, որի հետևանքով Ռուսաստանում ձևավորվում է իշխանության քաղաքական կազմակերպման մի նոր համակարգ, որը հայտնի է «Հունիսերեքյան միապետություն» անվամբ<sup>2</sup>: Այս շրջանում իշխանությունների ներքին քաղաքականությունը բնորոշ էր երկակիությունը. մի կողմից այն միտված էր հակակառավարական շարժումները ճնշելուն, մյուս կողմից՝ վերափոխումներ իրականացնելուն: Դրանք հետապնդում էին իշխանության սոցիալական հեմարանը ընդլայնելու և ամրապնդելու նպատակ<sup>3</sup>:

Հեղաշրջումից հետո՝ մինչև 1910 թ., ՍԴԲՀ հրապարակային գործունեությունը հասկանալի պատճառներով ակտիվությամբ ու բազմազանությամբ աչքի չի ընկնում: Այդ շրջանում սպեցիֆիկները հրատարակում են միայն երեք նոր անուն թերթեր, որոնք կարճ կյանք են ունենում: Մասնավորապես 1908 թ. փետրվար-մարտին Թիֆլիսում հրատարակվում է «Գործ» երկշաբաթաթերթի չորս համար, 1909 թ. Բաքվում լույս է տեսնում «Ուղի» շաբաթաթերթի երեք համար<sup>4</sup>, իսկ «Նոր օրեր»-ից սպեցիֆիկներին է պատկանել միայն չորրորդ համարը<sup>5</sup>:

Այս ժամանակահատվածում ՍԴԲՀ մարտավարությունը, ելնելով քաղաքական իրավիճակից, որոշակիորեն թեքվում է դեպի աջ և կորցնում հեղափոխության շրջանի մարտականությունը: Դ. Անանունը, որպես կուսակցական ղեկավար գործիչներից մեկն, այս շրջանում պաշտպանում է իշխանությունների առաջարկած նավթարդյունաբերական բանվորների խորհրդակցություն հրավիրելու գաղափարը, քանի որ այն կազմակերպվելու էր միջազգային և անկուսակցական սկզբունքներով, ինչը, նրա կարծիքով, թույլ կտար հայ բանվորներին դուրս

<sup>1</sup> Տե՛ս Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատոր առաջին (1800-1870), Բագու, 1916:

<sup>2</sup> Орлов А. С., Георгиев В. А. и др., История России, Москва, 2003, с. 305.

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 305-306:

<sup>4</sup> Տե՛ս «Գործ», Թիֆլիս, 1917, N 4, ապրիլ, էջ 76-77:

<sup>5</sup> Տե՛ս Անանուն Դ., նշվ. աշխ., հատոր երրորդ (1901-1918), էջ 489:

բերել ազգային կուսակցությունների ազդեցությունից և նրանց կսովորեցնել ինքնագործունեություն ու կռվի եվրոպական եղանակներ<sup>1</sup>: Ընդ որում՝ նա այդ տարիներին նավթարդյունաբերական բանվորների խորհրդակցությունը դիտում էր որպես բանվորների տնտեսական պայքարի նպատակահարմար միջոց<sup>2</sup>: Բացի նշվածից՝ Դ. Անանունը սկսում է ավելի կարևորել նաև բանվորական օրենսդրության ընդունման անհրաժեշտությունը, ինչի կապակցությամբ հետագայում ևս հանդես է գալիս հողվածներով<sup>3</sup>:

Համապետական մասշտաբներով տեղի ունեցող գործընթացները, անշուշտ, էապես թուլացնում են ՍԴԲՀԿ-ն, հիասթափություն և հոռետեսական տրամադրություններ առաջ բերում նրա ներսում, բայց ներկուսակցական հարթության վրա տեղի ունեցող գործընթացներն ավելի բացասական ազդեցություն ունեցան նրա վրա: ՍԴԲՀԿ-ի ներկուսակցական մթնոլորտի վրա ազդող հիմնական խնդիրը ՌՍԴԲԿ հետ միավորման գործընթացի ձգձգման հետ կապված կուսակցության ներսում առաջացած տարածայնություններն էին: Բանն այն է, որ 1906 թ. կեսին ՍԴԲՀԿ-ն և ՌՍԴԲԿ-ն հարաբերությունների բարելավման, համագործակցության և միավորման գործընթաց էին սկսել<sup>4</sup>: Հարաբերությունների զարգացումը բերում է նրան, որ ՌՍԴԲԿ 5-րդ համագումարը (1907 թ. գարուն) բուլշևիկների և բունդականների աջակցությամբ ընդունում է երկու կուսակցությունների միավորման պայմանների նախագիծը՝ կենտկոմին հանձնարարելով հնարավորին արագ իրականացնել միավորումը<sup>5</sup>:

Չնայած դրան, 1908 թ. փետրվարին ՌՍԴԲԿ կովկասյան կազմակերպությունների 5-րդ համագումարը, որտեղ բացարձակ մեծամասնություն էին կազմում վրաց մենշևիկները, անընդունելի և աննպատակահարմար է համարում ՌՍԴԲԿ և ՍԴԲՀԿ միավորման լոնդոնյան համագումարի ընդունած պայմանների նախագիծը՝ փոխարենը ՍԴԲՀԿ կազմակերպություններին առաջարկելով ձուլվել ՌՍԴԲԿ մեջ և տեղական կազմակերպություններին կից ունենալ լոկ հայկական սեկցիաներ<sup>6</sup>: Թեև 1909 թ. սկզբին ՌՍԴԲԿ կենտկոմի փարիզյան պլենումը նորից անդրադառնում է կուսակցությունների միավորման հարցին, գործընթացը ձախողվում է<sup>7</sup>:

Նշված դժվարությունները, հատկապես վրաց մենշևիկների ազդեցությամբ ՌՍԴԲԿ կովկասյան մարմինների համագումարի առաջադրած պայմանները, ՍԴԲՀԿ ներսում պառակտում են առաջ բերում: Ձևավորվում են երեք խմբեր, որոնք չեն կարողանում ընդհանուր հայտարարի գալ և 1911 թ. վերջերին ՍԴԲՀԿ-ն քայքայվում է: Նրա անդամների մի մասը հարում է բուլշևիկներին ու մենշևիկներին: Պահպանվում է մի կորիզ Դ. Անանունի գլխավորությամբ, որի շուրջը, անկախ իրենց կուսակցական պատկանելությունից, համախմբվում և մինչև 1910-

<sup>1</sup> Տե՛ս Նորել Դ., Նավթարդյունաբերական բանուորների խորհրդակցութեան հարցի շուրջ «Գործ», Թիֆլիս, 1908, N 4, մարտի 30, էջ 105, 109-111:

<sup>2</sup> Պա չի նշանակում, որ նրանք խորհրդակցությունը համարել են պրոլետարիատի ազատագրման միակ միջոցը, ինչի համար նրան մեղադրել են խորհրդահայ պատմաբանները (Արզումանյան Մ., նշվ. աշխ., էջ 207): Առավել ևս դա չի նշանակում, թե նրանք իրենց դրոշը խոնարհել են հայ խոշոր բուրժուազիայի առաջ, փարվել շահագործողներին, դարձել նոր ռեժիմի ջատագով կամ արդարացրել վարձու ստրկությունը, ինչպես պնդել են խորհրդահայ որոշ պատմաբաններ (Արզումանյան Մ., նույն տեղում, էջ 7, Վարդանյան Հ., Անդրկովկասում նացիոնալիզմի դեմ բուլշևիկների մղած պայքարի պատմությունից (1903-1920 թթ.), էջ 85):

<sup>3</sup> Տե՛ս Անանուն Դ., Բանուորների պետական ապահովագրությունը հիւանդությունից, «Նոր կեանք», Բագու, 1911, N 1-2, դեկտեմբերի 11, էջ 40-53 և Բանուորական օրինագծերը Պետական Դումայում, 1912, N 3-4, փետրվարի 19, էջ 176-181:

<sup>4</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Հակոբյան Վ., Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ձևավորումն ու առաջին քայլերը, Ե., 2015, էջ 102-118:

<sup>5</sup> Տե՛ս Пятый (Лондонский) съезд РСДРП, протоколы, Москва, 1963, с. 589. Ուշագրավ է, որ համագումարի քսանչորսերորդ (1907 թ. մայիսի 14 (27)-ի նիստում ՍԴԲՀԿ-ի անունից ելույթով հանդես եկած Լերրը (Ղ. Տեր-Ղազարյանը), երկար խոսելով Հայկական հարցի, ազգային կուսակցությունների և այլնի մասին, նշում է, որ ամենօրյա պայքարի ընթացքում իրենք հանդիպել են եղբայրական ՌՍԴԲԿ-ին, որի կազմակերպությունների հետ այլևս նախկին սուր հարաբերությունները չկան, ընդհակառակը, իրենք հաճախ միասնական են հանդես գալիս, բայց այժմ անհրաժեշտ է, որ երկու ուժերի միջև վեճերը բացառվեն: Տե՛ս Пятый (Лондонский) съезд РСДРП, протоколы, с. 448-449: Տե՛ս նաև Հակոբյան Վ., Ալեքսանդր Մյասնիկյանի հասարակական-քաղաքական գործունեության մինչբուլշևիկյան փուլը, «Պատմություն և մշակույթ», Ե., 2017, էջ 103-104:

<sup>6</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 29, թ. 1, Галоян Г., Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900-1922 гг., Ер., 1969, с. 114

<sup>7</sup> Տե՛ս Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը համագումարների, կոնֆերանսների և կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում, 1898-1917, հ. 1, Ե., 1985 (այսուհետև՝ ՍՄԿԿ-ն... բանաձևերում և որոշումներում), էջ 413: Տե՛ս նաև Հակոբյան Վ., Ալեքսանդր Մյասնիկյանի հասարակական-քաղաքական գործունեության մինչբուլշևիկյան փուլը, «Պատմություն և մշակույթ», Ե., 2017, էջ 103-104:

ական թթ. կեսերը ակտիվ գիտամշակութային գործունեություն են ծավալում ՍԴԲՀԿ-ի նախկին անդամները: Նրանք իրենց քաղաքական կրավորական դիրքորոշումը լրացնում են գիտական-հրապարակախոսական եռանդուն գործունեությամբ՝ աշխատելով գիտության տարբեր ճյուղերին (գրականագիտություն, տնտեսագիտություն, սոցիոլոգիա, քաղաքագիտություն) վերաբերող իրենց ուսումնասիրություններում հայ իրականության, հասարակական կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող հարցերը քննելիս կիրառել մարքսիստական, դիալեկտիկական մատերիալիզմի մեթոդաբանությունն ու սկզբունքները:

Վերոնշյալ փուլում Դ. Անանունը խմբագրում է «Նոր կեանք»-ը և կազմում «Մեր ուղին» ժողովածուն: «Կոչ» թերթի վրա էլ թեև այլ խմբագրի անուն է նշված, փաստացի խմբագիրը նա է եղել: Ինչ վերաբերում է «Գարուն» գրական ամսանախին, ապա այն գլխավորապես ՍԴԲՀԿ նախկին անդամների նախաձեռնությամբ և ջանքերով տպագրվող ամսանախ էր, որին Դ. Անանունն ընդամենը աշխատակցել է: Հիշյալ փուլում նա թղթակցում է այլ թերթերի ևս, օրինակ՝ «Բաքվի ծայն», «Նոր հոսանք», «Մշակ»<sup>1</sup> և այլն: Նիկոլ Աղբալյանի խմբագրությամբ լույս տեսնող «Նոր հոսանք»-ում Դ. Անանունը սոցիալ-տնտեսական հարցերի պատասխանատուն էր<sup>2</sup>:

Հիշյալ ժամանակահատվածում Դ. Անանունի գրած բազմաթիվ և բազմաբնույթ հոդվածների, նրա կողմից արծարծված խնդիրների մասին հնարավորինս համակարգված պատկերացում կազմելու համար դրանք ըստ ուղղությունների կարելի է բաժանել երեք խմբի՝ ա. զուտ հասարակական հնչեղություն ունեցող հարցեր<sup>3</sup>, բ. բանասիրական<sup>4</sup>, պատմագիտական<sup>5</sup> և գ. քաղաքական՝ բանվորական, ագրարային ու ազգային հիմնախնդիրներ<sup>6</sup>:

<sup>1</sup> Դ. Անանունը «Մշակ»-ին թղթակցել է 1913 թ. սեպտեմբերից: Տե՛ս Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատոր երրորդ, էջ 567): 1915 թ. նա արդեն «Մշակ»-ի Բաքվի թղթակիցն էր, իսկ 1919 թ. խմբագրական խորհրդի անդամը (տե՛ս ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, N 111, թ. 1, 3:

<sup>2</sup> Տե՛ս Հայ պարբերական մամուլի պատմություն 1900-1922 թթ., Ե., 2017, էջ 590:

<sup>3</sup> Տե՛ս Մի հանդեսի առիթով, «Նոր օրեր», Բագու, 1909, N 1, մարտի 8, էջ 3-4, Հայ տպագրութեան 400-ամեակի առիթով, «Մեր ուղին», ժողովածու, Բագու, 1912, էջ 5-12, Հայ բուրժուազիայի սիկոֆանտը, «Կոչ», Բագու, 1911, N 2, ապրիլի 21, էջ 1-8 (Հին Աթենքում սիկոֆանտ անվանել են մաքսային հսկիչին: Ներկայումս դա մատնիչներին, զրպարտիչներին և լրտեսներին տրվող ընդհանուր անուն է), Մեծապատիվ մուրացկաններ, «Կոչ», 1911, N 4, մայիսի 22, էջ 1-7:

<sup>4</sup> Տե՛ս Ռօբերտ Բեռնս, Ինչ էլ, որ լինի, «Նոր օրեր», 1909, N 2, մարտի 21, էջ 2: Վ. Բրիւսով, Քարտաշը, «Նոր օրեր», 1909, N 4, հունիսի 28, էջ 6: Է. Վերհարն, Սեղանավորը, «Նոր կեանք», 1911, N 1-2, դեկտեմբերի 11, էջ 38-40: Հեյնե Հ., Քաղաքական երգչին, «Կոչ», 1911, N 4, մայիսի 22, էջ 19: Պ. Եակուբովիչ, Կեանքի պայքար, «Կոչ», 1911, N 2, ապրիլի 21, էջ 38-39: Հ. Հեյնե, Enfant, «Մեր ուղին», ժողովածու, 1912, էջ 50: Շքինդ եւ յառաջ, քննադատութեան փոխարեն (Արսէն Տէրտերեան, Վահան Տէրեան-ցնորքի ծարավի եւ հաշտութեան երգիչը), «Կոչ», 1911, N 1, ապրիլի 3, էջ 30-48, Հովհաննես Հովհաննիսեան (Նրա երեսնամեայ բանաստեղծական ստեղծագործութեան առիթով), «Նոր կեանք», 1912, N 3-4, փետրվարի 19, էջ 113-121, Մենութեան մղձաւանջը, (Վ. Տերեանի մասին), «Մեր ուղին», ժողովածու, 1912, էջ 38-39, Անցեալի մեծարանքը (Յովհաննես Թումանեանի քնարը), «Գարուն», Սոսկվա, 1912, էջ 99-128, Մենութեան մղձաւանջը (Վահան Տերեան՝ «Մթնշաղի անուրջներ») «Նոր օրեր», 1909, N 2, մարտի 21, էջ 5-6, Արսէն Տերտերեան, Միքայէլ Նալբանդեան-ազգութեան հրապարակախոսը, 1910, 193 էջ, «Նոր կեանք», 1911, N 1-2, դեկտեմբերի 11, էջ 78-81, Վ. Փափագեան, Պատմութիւն հայոց գրականութեան, Թիֆլիս, 1901, 817 էջ, «Նոր կեանք», 1912, N 3-4, փետրվարի 19, էջ 184-186, Ալ. Աբելեան, Նշանուածներ, պիես երեք գործողութեամբ, («Արօր», Թիֆլիս, 1911, N 10-12), «Նոր կեանք», 1912, N 3-4, փետրվարի 19, էջ 186-189, Գր. Տէր-Պողոսեան, «Հովոյի Եգօն», պատմուածք Բալախանի կեանքից, «Կոչ», 1911, N 4, մայիսի 22, էջ 62-64. Օրմանեան, Հայոց եկեղեցին, Կ.Պ., 1911, «Մեր ուղին», ժողովածու, 1912, էջ 125-129, Եր. Պալեան, Միքայէլ Նալբանդեանի տնտեսական թեորիան, «Կոչ», 1911, N 1, ապրիլի 3, էջ 62-64, Սուսայէլեան Հ., Անդրկովկասի հողային պայմանները-պատմատնտեսական փորձ, 74 էջ, «Կոչ», 1911, N 2, ապրիլի 21, էջ 53-54, Թաղ. Աղալբեգեան, Խաչատուր Աբուեան (պատմական-գրական վերլուծութիւն), 50 էջ, «Կոչ», 1911, N 2, ապրիլի 21, էջ 59-60, Ֆօն-Պօլենց, Գիւղացի Բիւտները, վեպ, թարգմ. Սեդրակ Թառայեանցը, «Կոչ», 1911, N 3, մայիսի 1, էջ 62-64:

<sup>5</sup> Տե՛ս Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870), «Նոր հոսանք», Թիֆլիս, 1914, N 2, փետրուար, էջ 250-274, N 3, մարտ, էջ 417-438, N 4, ապրիլ, էջ 594-620, N 5 մայիս, էջ 743-753, N 6, յունիս, էջ 949-970, N 7-8, յուլիս-օգոստոս, էջ 1155-1186:

<sup>6</sup> Տե՛ս նրա «Բանուրների պետական ապահովագրութիւն», «Նոր կեանք», 1911, N 1-2, դեկտեմբերի 11, էջ 40-53, Բանուրական օրինագծերը Պետական Ղումայում, «Նոր կեանք», 1912, N 3-4, փետրվարի 19, էջ 176-181, Նալբարդինաբերական հայ բանուրի նկարագրից, «Նոր կեանք», 1911, N 1-2, դեկտեմբերի 11, էջ 68-72, 1903 թ. յունիսի 2-ի օրենքը (Մի էջ բանուրական օրենսդրութիւնից), «Կոչ», 1911, N 3, մայիսի 1, էջ 26-35, Բանուրական օրենսդրութիւն, «Մեր ուղին», ժողովածու, Բագու, 1912, էջ 118-129, Նալբարդինաբերական հայ բանուրի նկարագրի մասին, «Նոր հոսանք», 1913, N 4-5, յունիս-յուլիս, էջ 841-855, Կովկասի գիւղացիութեան վերաբերեալ նոր օրինագիծ, «Նոր հոսանք», 1913, N 7-10, սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 1297-1307, Կովկասը իբրև

Դավիթ Անանունի, որպես հրապարակախոսի բարձր հեղինակության մասին է վկայում այն փաստը, որ տարբեր փուլերում մի շարք պարբերականների խմբագրություններ («Армянский вестник», «Համբավաբեր», «Բանբեր գրական գեղարվեստական հասարակական ամսագիր», «Գյուղատնտեսական հանդես») նամակով դիմել են նրան՝ խնդրելով թղթակցել իրենց<sup>1</sup>: Իսկ «Армянский вестник»-ի խմբագրությունը նաև խնդրում էր թույլտվություն նրա անունն իր կազմում ներառելու համար: Դ. Անանունի հետ համագործակցությամբ շահագրգռված էին նաև կուսակցությունները: Օրինակ՝ նորաստեղծ Հայ ժողովրդական կուսակցության վարչության նախագահ Լևոն Ղուլյանը 1917 թ. մայիսի 22-ի նամակով վարչության անունից նրան խնդրում է քաղաքական, տնտեսական և ազգային ժամանակակից հարցերի լուսաբանության վերաբերյալ հոդվածներով թղթակցել ՀԺԿ «Թերթոն»-ին, նաև փորձում ճշտել, թե ինչ բովանդակությամբ և ինչ պայմաններով բրոշյուրներ կարող է պատրաստել<sup>2</sup>:

Գնահատվում է նաև Դ. Անանունի գրական-գրաքննդատական ուղղվածության գործունեությունը: Դրա վկայությունը 1912 թ. նոյեմբերին գաղտնի քվեարկությամբ նրան Հայ գրողների կովկասյան ընկերության անդամ ընտրելն էր<sup>3</sup>:

Աշխարհամարտի առաջին տարիներին Դ. Անանունի հրապարակախոսական ակտիվ գործունեությունը շարունակվում է: Դրա կողքին կրկին աշխուժանում է հասարակական-քաղաքական բաղադրիչը: Մինչդեռ գրական-բանասիրական ուղղության փոխարեն առաջնային տեղ է սկսում զբաղեցնել պատմագիտականը<sup>4</sup>: Միաժամանակ մինչ այդ ակտիվ հրապարակախոսական, գրական և գիտական գործունեություն ծավալած հայ սոցիալ-դեմոկրատների խմբակը նույն տարիներին ընդհանուր առմամբ դադարեցնում է այդ ուղղությամբ աշխատանքները: Դ. Անանունը և Բաքվի սպեցիֆիկները այդ տարիներին համագործակցում են Լ. Աթաբեկյանի գլխավորած հայ սոցիալիստ-հեղափոխականների (էսէռների) հետ՝ ձևավորելով ձախակողմյան յուրօրինակ մի խմբակցություն: Այդ էր պատճառը, որ Դ. Անանունը Լ. Աթաբեկյանին հայ սոցիալ-դեմոկրատների համար ընտանի մարդ էր համարում<sup>5</sup>:

Այս փուլում Դ. Անանունի հասարակական-քաղաքական ակտիվությունը զարգանում է երկու ուղղությամբ: Մի կողմից՝ նրանք Բաքվի ձախ խմբակի հետ փորձում են ներթափանցել ազգային կառույցներ ու ազդել հասարակական-քաղաքական գործընթացների վրա: Այդ նպատակով Դ. Անանունը նաև հոդվածներ է գրում համագումարի հրավիրման անհրաժեշտության, կամավորական շարժման և այլ հարցերի կապակցությամբ: Մյուս կողմից՝ նրանք մասնակցում են Բաքվի սոցիալ-դեմոկրատների հումանիտար գործունեությանը՝ փորձելով գաղթականներին հումանիտար օգնություն ցուցաբերել:

Առաջին աշխարհամարտի սկզբում՝ մինչև Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը, Դ. Անանունը հանդես է գալիս մի հոդվածաշարով<sup>6</sup>, որում, դաշնակցության դեմ ուղղված քննադատական խոսքից զատ, հայությանը ծանր կորուստների չմատնելու, սխալներից ու պատուհասներից հեռու պահելու նպատակով առաջարկում էր հրավիրել ազգի հավաքական կամքը ներկայացնող հայկական համագումար: Վերջինս պետք է որոշեր հայության բզկտված մարմինը կազդուրելու, վերածնելու համար տարվելիք գործունեության ուղղությունները և միաժա-

գաղթավայր, «Նոր հոսանք», 1914, N 1, յունուար, էջ 92-114, Հոդի շուրջ (1912 թ. դեկտեմբերի 20-ի օրէնքը), «Փայլակ», Շուշի, 1915, N 18, մայիսի 10, էջ 2, N 19, մայիսի 14, էջ 2, N 20, մայիսի 17, էջ 2, Ազգային հարցը և դեմոկրատիան, «Նոր հոսանք», 1913, N 1, մարտ, էջ 142-154, N 2, ապրիլ, էջ 358-372, Ի. Ստալինի դեմ ուղղված «Դարձեալ ազգային հարցը և դեմոկրատիան», «Նոր հոսանք», 1913, N 6, օգոստոս, էջ 1062-1071, Ինչու՞ է թուրքահայ դատը ժողովրդական մեր մեջ, «Փայլակ», 1915, N 35, հուլիսի 9, էջ 2:

<sup>1</sup> Տե՛ս ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, գ. 23, թ. 1-3, գ. 28, թ. 1, գ. 30, թ. 1, գ. 67, թ. 1, գ. 81<sup>ա</sup>, թ. 1:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 78, թ. 1:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 68, թ. 1:

<sup>4</sup> Մասնավորապես 1916 թ. Բաքվում լույս են տեսնում նրա «Ռուսահայերի հասարակական զարգացումը (1800-1870 թթ.)» եռահատոր աշխատության առաջին հատորը, ինչպես նաև ռուս մեծանուն գրող Մ. Գորկու ղեկավարությամբ և Վ. Տերյանի ու Պ. Մակինցյանի աշխատակցությամբ ռուսերենով հրատարակված «Հայ գրականության ժողովածուի» Հայկական հարցին նվիրված Դ. Անանունի հոդվածը: Տե՛ս Ананунъ Д., Армянскій вопросъ въ Россіи, Сборникъ Армянской литературы, подъ ред. М. Горькаго, Петроградъ, 1916, с. V- CL VI.

<sup>5</sup> Տե՛ս «Բանուր», Բագու, 1918, N 9, մարտի 25, էջ 1, «Հայաստանի կօօպերացիա», 1920, N 7, ապրիլի 15, էջ 223:

<sup>6</sup> Տե՛ս «Մշակ», 1914, N 211, սեպտեմբերի 23, N 219, հոկտեմբերի 1, N 221, հոկտեմբերի 3:



մանակ նրան հետ պահեր ուրիշների ձեռքում գործիք դառնալու վտանգի<sup>1</sup>: Դ. Անանունը կարծում էր, որ հայությունը պետք է լինի պայմանավորվող՝ ընձեռող ու ստացող կողմ, այլ ոչ թե հլու կամակատար և թշվառ ակնկալող<sup>2</sup>: Նա ժխտում էր Ազգային բյուրոյի՝ ազգի ղեկավար կենտրոնի դերը, քանզի կարծում էր, որ այդ գործադիր կառույցի նպատակն ի սկզբանե եղել է Արևմտյան Հայաստանի բարենորոգումների ծրագիրն ընդունելուց հետո արևմտահայերի մշակութային առաջընթացին նպաստելը<sup>3</sup>: Նշված մոտեցումները չեն խանգարում, որ նույն 1914 թ. աշնանը Դ. Անանունը բժ. Տ. Իսախանյանի և Լ. Աթաբեկյանի հետ երկիցս դիմի Բաքվի Հայ ազգային բյուրոյին՝ առաջարկելով իր կազմի մեջ ընդունել իրենց ներկայացուցչին: Այդ քայլը նրանք հիմնավորում էին «արևմտահայերի համար նախատեսված օգնությունը ի մի կազմակերպված ուղարկելու, և նշված խմբի տեսակետները բյուրոյում արտահայտելու անհրաժեշտութեամբ»<sup>4</sup>: Երբ այդ առաջարկը մնում է անպատասխան, խմբի անդամները դիմում են հայ հասարակությանը՝ հայտնելով, որ իրենք այլևս պատասխանատվություն չեն կրում Բաքվի Ազգային բյուրոյի քայլերի համար<sup>5</sup>:

Առաջին աշխարհամարտի շրջանակներում 1914 թ. հոկտեմբերի վերջին ռուս-թուրքական պատերազմի սկսվելուց հետո, հայ հասարակության բոլոր շերտերն ու քաղաքական ուժերը (բացառությամբ բոլշևիկների) հանդես են գալիս հոգուտ Ռուսաստանի հաղթանակի, քանի որ Գերմանիայի և Թուրքիայի հաղթանակը նշանակելու էր Հայկական հարցի վերջնական տապալում և թուրքերի կողմից Այսրկովկասի հայկական գավառների գրավում<sup>6</sup>: Հայերը հույս ունեին, որ Անտանտի տերությունների հաղթանակի դեպքում Հայկական հարցը ևս կլուծվի<sup>7</sup>: Այս պայմաններում հայության շրջանում հասարակական հնչեղություն է ստանում կամավորական ջոկատների ձևավորման անհրաժեշտության հարցը:

Առաջին հանրապետության շրջանում՝ 1919 թ., անդրադառնալով կամավորական շարժման հարցին, Դ. Անանունը գրում է, որ իրենց խումբը դեմ չի եղել հայերի կողմից պետական բանակի շարքերը խտացնելուն, քանի որ, Թուրքիայի համեմատ, Ռուսաստանին համարում էին նվազագույն չարիք: Անձամբ ինքը, դեմ չլինելով կամավորական շարժմանը, կարծում էր, որ հայ կամավորները պետք է մտնեն պետական բանակ, որպեսզի առանձին հայկական կամավորական ջոկատների առկայությունը նախ հայերի դեմ չգրգռեր հարևան թաթարներին (ադրբեջանցիներին), և հետո Թուրքիան այդպիսով առիթ չունենար, կամավորական խմբերին պատրվակ բռնելով, իրագործելու իր հայաջինջ ծրագիրը<sup>8</sup>: Բայց ավելի ուշ՝ 1926 թ. լույս տեսած «Ռուսահայերի հասարակական զարգացումը» աշխատության երրորդ հատորում Դ. Անանունը գրում է հակառակը՝ իբր «Մշակ»-ում լույս տեսած հոդվածներում<sup>9</sup> ինքը դեմ է արտահայտվել կամավորական շարժմանը, պահանջել զերծ մնալ ինքնապաշտպանության վտանգավոր փորձից և այլն<sup>10</sup>: Այնինչ նրա հիշատակած հոդվածներն ամենևին էլ նման բովանդակություն չեն ունեցել: Դրանցից մեկում նա ընդամենը մտահոգություն էր հայտնել, որ հայերի ինքնապաշտպանությունը կարող է ինքնասպանություն դառնալ<sup>11</sup>. մտահոգություն, որ ունեին բոլոր քաղաքական ուժերը:

Պատերազմի ընթացքում ցեղասպանությունից մազապուրծ արևմտահայերին օգնություն ցուցաբերելու հարցում Դ. Անանունը ևս անտարբեր չի մնում և ներգրավվում է որոշ նախաձեռնություններում: Իր համախոհների հետ նա մասնակցում է մի խումբ հայ և ռուս սոցիալ-դեմոկրատների կողմից 1914 թ. դեկտեմբերի 30-ին Բաքվում ստեղծված միջազգային կոմիտեի աշխատանքներին<sup>12</sup>: Վերջինիս նպատակն առանց ազգային խտրության փախստականներին

<sup>1</sup> Տե՛ս նույնը, 1914, N 211, սեպտեմբերի 23, էջ 3:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 62, թ. 1-4:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 3:

<sup>6</sup> Տե՛ս Անանուն Դ., նշվ. աշխ., հատոր երրորդ, էջ 540:

<sup>7</sup> Ананунъ Д., Армянскій вопросъ въ Россіи, Сборникъ Армянской литературы, подъ ред. М. Горькаго, с. XLVI.

<sup>8</sup> Տե՛ս «Մշակ», 1919, N 69, էջ 2, ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 96, թ. 48-49:

<sup>9</sup> Խոսքը վերոնշյալ հոդվածների մասին է, Տե՛ս «Մշակ», 1914, N 211, 219, 221:

<sup>10</sup> Տե՛ս Անանուն Դ., նշվ. աշխ., հատոր երրորդ, էջ 567, 571:

<sup>11</sup> Տե՛ս «Մշակ», 1914, N 221, էջ 3:

<sup>12</sup> Խոսքը Բաքվի առանց ազգային խտրության գաղթականների օգնության կոմիտեի մասին է: Տե՛ս Անանուն Դ., Փախստականների օգնութեան գործը Բաքվում, «Մշակ», 1915, N 3, հունուարի 6, էջ 3:

օգնություն ցույց տալն էր: Նշված կոմիտեն, հավաքելով 40000 ռուբլի, մթերք ու հագուստ է ուղարկել Կարս, Ալեքսանդրապոլ, Արդահան, Բաթում և այլուր<sup>1</sup>: Կոմիտեի պատվավոր նախագահը Բաքվի քաղաքագլուխ Լ. Բիչն էր, իսկ փաստացի՝ Վ. Ֆրոլովը, ով Բաքվի նավթարդյունաբերողների խորհրդի վիճակագրական բյուրոյի կառավարիչն էր:

Բացի դա՝ Թիֆլիսի Հայ նպաստամատույց ընկերության հետ համագործակցելով՝ Դ. Անանունն օգնել է Բաքվում վաճառելու Լինչի «Հայաստան» երկհատոր գրքի օրինակներ, ինչպես նաև տոմսեր, որոնցից ստացված հասույթը ևս պետք է օգտագործվեր հայ գաղթականների աջակցության համար<sup>2</sup>:

1917 թ. Փետրվարյան հեղափոխության և Հոկտեմբերյան հեղաշրջման շրջանում Դ. Անանունը զբաղվում է ակտիվ քաղաքականությամբ, ընկերների հետ վերակենդանացնում է ՍԴԲՀ-ն, օրախնդիր և այլ բնույթի հոդվածներով հանդես գալիս կուսակցական և չեզոք մանուլում, կուսակցական ժողովներում կարդում դասախոսություններ<sup>3</sup>, մասնակցում համահայկական և միջկուսակցական ժողովների և այլն: Քաղաքական առումով նա ընդհանուր առմամբ պաշտպանում էր ժամանակավոր կառավարության քաղաքական գիծը, իսկ Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո՝ բացասական գնահատում բոլշևիկների վարած քաղաքականությունը:

Այսպես՝ 1917 թ. մարտի 29-ին ընկերոջը՝ Ջալալ Տեր-Աստվածատրյանին գրած նամակում Դ. Անանունը գրում է. «Մերոնք էլ են շարժվել, ուզում են թերթ հրատարակել: Մ. Բաղդաթյանը պաշտոնով տեղափոխվել է այստեղ (Բաքու - հեղ.) և խոստանում է որոշ գումար տալ: Մի երկու ժողով է տեղի ունեցել, բայց գործնական քայլեր դեռ չեն արուել: Մի առանձին հրատարակչական խումբ է կազմավորվել, որը նպատակ ունի բրոշյուրներ հրատարակել օրուայ պահանջներին համապատասխան<sup>4</sup>: Խումբը կապ ունի «Գործի»<sup>5</sup> հետ»<sup>6</sup>: Ապրիլի 18-ին և 24-ին ուղարկած նամակներում Դ. Անանունը նշում է, որ իրենք էլ են գործունեություն ծավալում, որ լույս է տեսել «Բանուր»-ի<sup>7</sup> առաջին համարը, և իրենց մոտ անվերջ ժողովներ են տեղի ունենում և այլն<sup>8</sup>: Մայիսի 10-ին Դ. Անանունը, Դ. Տեր-Ղազարյանը, Տ. Իսախանյանը և Գ. Պիճիկյանը հանդես են գալիս կուսակցությունը վերականգնելու հայտարարությամբ<sup>9</sup>:

Դավիթ Անանունը 1917 թ. Թիֆլիսում մասնակցում է երկու կարևոր համաժողովների: Դրանցից առաջինը սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին տեղի ունեցած Արևելահայերի առա-

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 96, թ. 49-50:

<sup>2</sup> Տե՛ս ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, գ. 17-18:

<sup>3</sup> Տե՛ս «Բանուր», Բազու, 1917, N 4, մայիսի 7, էջ 4, N 5, մայիսի 14, էջ 4, N 7, մայիսի 28, էջ 4, N 11, հունիսի 25, էջ 4 և այլն:

<sup>4</sup> Ի դեպ, այդ խմբում ներգրավված Դ. Անանունը բրոշյուր է հրատարակել հիմնադիր ժողովի մասին (տե՛ս Դ. Ա., Հիմնադիր ժողով, Բազու, 1917): Դրանում հանրամատչելի ձևով ընթերցողին ներկայացվում է Հիմնադիր ժողովի հրավիրման պատմությունը Ռուսաստանում, սկսած Առաջին հեղափոխությունից: Նշվում է, որ Փետրվարյան հեղափոխության հետևանքով ձևավորված ժամանակավոր կառավարությունը պարտավորվել է հրավիրել Հիմնադիր ժողով: Համառոտ լուսաբանվում է, թե ինչ է Հիմնադիր ժողովը, ինչ սկզբունքներով և ընտրական գործընթացով է ընտրվելու այն, որոնք են լինելու նրա որոշելիք հարցերը և այլն:

<sup>5</sup> Գրական, գիտական, հասարակական-քաղաքական «Գործ» ամսագիրը հրատարակվել է 1917 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին (12 համար)՝ խմբագրությամբ Վ. Կրասիլնիկյանի և որևէ քաղաքական ուղղության չի պատկանել: «Գործ»-ի շուրջ համախմբվել են տարբեր քաղաքական հայացքներ ունեցող ու չեզոք մտավորականներ: Այս ամսագրում Դ. Անանունը անդրադարձել է բազմաբնույթ հարցերի: Օրինակ՝ Անանուն Դ., Փորձության ժամին, «Գործ», Բազու, 1917, N 1, հունվար, էջ 19-24, Մտքի տկարություն ազգային հարցի լուծման խնդրում, «Գործ», 1917, N 3, մարտ, էջ 14-30, նույն համարում՝ Պերձ Պռոշյանի նամակները: Նշխարներ անցյալից, էջ 147-154, Բոգդան Կնունեանց (Հայ մտավորականության պատմությունից), «Գործ», 1917, N 4, ապրիլ, էջ 69-74 և այլն:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 99, թ. 57-58:

<sup>7</sup> «Բանուր» երկշաբաթաթերթը լույս է տեսել 1917 թ. ապրիլ-հուլիս ամիսներին (16 համար) Գ. Պիճիկյանի խմբագրությամբ և 1918 թ. հունվար-օգոստոս ամիսներին (14 համար), խմբագրական խորհրդի կողմից: Այս թերթում Դ. Անանունն անդրադարձել է բազմաթիվ հարցերի: Դրանցից առավել կարևոր են ազգային և ագրարային հարցերին վերաբերող հոդվածները: Տե՛ս Անանուն Դ., Ազգային տերրիտորիա, «Բանուր», 1917, N 13, հուլիսի 9, էջ 1, N 14, հուլիսի 16, էջ 1-2, N 15, հուլիսի 23, էջ 1-2, N 16, հուլիսի 30, էջ 3 և այլն: Անանուն Դ., Նամակներ հայ գյուղացիներին «Բանուր», 1917, N 2, ապրիլի 24, էջ 2-3, N 4, մայիսի 7, էջ 2-3, N 5, մայիսի 14, էջ 2-3 և այլն:

<sup>8</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 99, թ. 60, 61, 63:

<sup>9</sup> Տե՛ս ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, գ. 121, թ. 1:

ջին համագումարն (համախորհրդակցություն) էր, որի ժամանակ նա հանդես է եկել ելույթով<sup>1</sup>: Երկրորդը հոկտեմբերի 3–7-ը տեղի ունեցած հայ սոցիալ-դեմոկրատների համախորհուրդն էր, որին մասնակցում էին Երևանը, Էջմիածինը, Թիֆլիսը, Բաքուն, Շուշին, Բաթումը ներկայացնող ՌՍԴԲԿ և ՍԴԲՀԿ 70 անդամներ<sup>2</sup>: Վերջինի նպատակն էր ստեղծել ՌՍԴԲԿ և ՍԴԲՀԿ կազմակերպչական միություն<sup>3</sup>: Նշելի է, որ ՌՍԴԲԿ մենչևիկյան թևի հետ սպեցիֆիկների որդեգրած միավորման ուղեգիծը երկար չի տևում:

Կովկասյան ճակատում 1918 թ. առաջին ամիսներին թուրքական հարձակման հետևանքով ստեղծված ռազմաքաղաքական ծանր իրադրության պայմաններում Դ. Անանունը դեմ է արտահայտվում Այսրկովկասը Ռուսաստանից անջատելուն, բայց հանդես է գալիս Սեյմի գումարման օգտին՝ հաշվի առնելով, որ Ռուսաստանը ջղաձգումների մեջ է, և այդ ժամանակահատվածում Սեյմը կարող է փրկարար հաստատություն լինել<sup>4</sup>: Ավելին, նա միամտություն է ունենում վրաց սոցիալ-դեմոկրատներին հատկացնել Այսրկովկասի ժողովուրդների համար «փրկարար շաղախի» դեր, մի բան, որը շատ հեռու էր նրանցից<sup>5</sup>:

1918 թ. Բաքվի մարտյան դեպքերի ժամանակ Դ. Անանունը գլխավորում է հումանիտար հանձնաժողովը<sup>6</sup>: Նույն թվականի հուլիսի վերջին մի խումբ ընկերների հետ նա թողնում է Բաքուն: Դ. Անանունը հատուկ հանձնարարությամբ պետք է մեկներ Ղարաբաղ<sup>7</sup>, բայց շուտով հայտնվում է Հյուսիսային Կովկասում, որտեղ ձերբակալվում է բոլշևիկների կողմից: Վ. Տերյանի միջամտության շնորհիվ ազատ է արձակվում և հեռանալու անցագիր ստանում<sup>8</sup>: Հինգ ամիս հետո հասնում է Թիֆլիս, իսկ այստեղից, թուրքական ներխուժման հետևանքով հայ բնակչությանը պատճառված վնասի չափը պարզող հանձնաժողովի հանձնարարությամբ, 1918 թ. դեկտեմբերին մեկնում Ղարաբաղ<sup>9</sup>: 1919 թ. փետրվարի սկզբներին վերադառնալով Թիֆլիս<sup>10</sup>: Դ. Անանունը փետրվար-մարտ ամիսներին խմբագրում է «Մշակ» թերթը:

Շուտով Դ. Անանունը Հայաստանի Հանրապետության պարենավորման նախարարությունից ստանում է նախարարության քարտուղարի պաշտոնը ստանձնելու հրավեր<sup>11</sup>: Նրան ուղղված Ք. Վերմիշյանի 1919 թ. մայիսի 16-ի նամակից պարզվում է, որ դեռևս ապրիլին նրանց միջև այդ հարցում պայմանավորվածություն է եղել, իսկ մայիսի 3-ին Դ. Անանունը Ք. Վերմիշյանին տեղյակ է պահել իր ուշանալու մասին<sup>12</sup>: Ք. Վերմիշյանի հրաժարականի պատճառով, սակայն, այդ նշանակումը տեղի չի ունենում<sup>13</sup>: Դրանից հետո՝ 1919 թ. հունիսին Դ. Անանունը լինում է Ղարաբաղում, ապա անցնում Երևան<sup>14</sup>:

Սկսվում է Դ. Անանունի գործունեության հայաստանյան փուլը: Հայրենիքում, ինչպես այլ սպեցիֆիկներ, նա կանգնում է ազգային պետականության պաշտպանության դիրքերում:

<sup>1</sup> Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 2004, էջ 169-170:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 65, թ. 1, նաև՝ ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, գ. 122, թ. 1-5:

<sup>3</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 65, թ. 1:

<sup>4</sup> Տե՛ս Անանուն Դ., Անդրկովկասի Սեյմ, «Բանոր», 1918, N 4, փետրվարի 18, էջ 1:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>6</sup> Տե՛ս Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայության պատմություն (Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Ե., 2011, էջ 355:

<sup>7</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 96, թ. 36:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 150, ց. 1, գ. 25, թ. 34-35:

<sup>9</sup> Դ. Անանունին ուղարկված 1918 թ. դեկտեմբերի 12-ով թվագրված նամակից պարզվում է, որ Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ բյուրոն նրան հանձնարարել էր ուսումնասիրել Ղարաբաղի (Շուշիի և Ջևանշիրի գավառների) հայ բնակչության կրած նյութական վնասները և տվել մեկ ամիս ժամկետ: Տե՛ս «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 2005, էջ 45: Նրա կողմից հանձնարարությունը կատարելուն նպաստելու համար բյուրոյի նախագահ Հ. Թումանյանը 1918 թ. դեկտեմբերի 11-ին Անդրանիկին ուղղված նամակում խնդրում է Ղարաբաղում Դ. Անանունի նկատմամբ ուշադիր լինել և աջակցել ամեն հարցում Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, նամակներ (1905-1922), Ե., 1999, էջ 299:

<sup>10</sup> Դ. Անանունը 1919 թ. փետրվարի 12-ին մասնակցել է Ղարաբաղի հայրենակցական միության նիստին և ներկայացվել որպես Ղարաբաղից նոր վերադարձած գործիչ «Մշակ», 1919, N 36, փետրվարի 15, էջ 4:

<sup>11</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 13, գ. 670, թ. 40:

<sup>12</sup> Տե՛ս ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, գ. 96, թ. 1:

<sup>13</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 13, գ. 670, թ. 40:

<sup>14</sup> Տե՛ս Իշխանեան Ե., Լեռնային Ղարաբաղը 1917-1920 թթ., Ե., 1999, էջ 459-461, ՀԱԱ, ֆ. 1191, ց. 13, գ. 670, թ. 30:

Դառնալով պետական ծառայող, խմբագիր և հրապարակախոս՝ նա մի կողմից մասնակցում ու նպաստում է պետության շենացման գործին, մյուս կողմից՝ տեղում ամրապնդվելով, Հայաստանում գտնվող իր կուսակիցների և այլ սոցիալ-դեմոկրատների հետ ստեղծում է Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը՝ ստանձնելով կառուցողական ընդդիմության դերակատարություն:

«Հ ներգաղթի և վերաշինության վարչության պետ Ա. Մաքսապետյանը Դ. Անանունին առաջարկում է աշխատել իր ղեկավարած կառույցում: Պատասխան նամակում վերջինս ներկայացնում է այն ոլորտը, որտեղ պատկերացում էր իր գործունեությունը: Նա ցանկություն է հայտնում ներգաղթի և վերաշինության կենտրոնական հաստատության մեջ հիմնել բյուրո, որը պետք է զբաղվեր Հայաստանի բնակչության էթնիկ կազմի, հողային, տարածքային, ջրաբաշխական, հաղորդակցական, կլիմայական և այլ պայմանների մասին տեղեկությունների հավաքմամբ և հատուկ տեղեկագրերում հրատարակմամբ: Դրանք պետք է հիմք դառնային տարբեր ոլորտներում քաղաքականության մշակման համար<sup>1</sup>: Այդ գործի ծախսողումից հետո 1919 թ. օգոստոսին Դ. Անանունը ստանձնում է Հայկոպի պաշտոնաթերթի՝ «Հայաստանի կօօպերացիա» երկշաբաթաթերթի խմբագրի պաշտոնը<sup>2</sup>:

Հետաքրքիր է, որ «Հայաստանի կօօպերացիա»-ի՝ Դ. Անանունի խմբագրությամբ լույս տեսած առաջին համարում խմբագրական կոլեգիան հանդես է գալիս նոր ծրագրով: Դրանում նշվում էր, որ իրենց նպատակն է հիմնովին կերպարանափոխել կապիտալիստական հասարակարգը, պայքարել սպառող ու աշխատավոր ժողովրդի շահագործման դեմ և տնտեսական զարգացման ճանապարհով, տնտեսական ձեռնարկություններով աշխատավորներին տեր դարձնել իրենց վաստակին<sup>3</sup>: Բացի այդ, ազդարարվում էր, որ երկշաբաթաթերթը չի զբաղվելու միայն կոոպերատիվ կյանքով, այլև օբյեկտիվորեն լուսաբանելու է հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը, խնդիրները, ներկայացնելու է հայ արվեստն ու գրականությունը<sup>4</sup>: Այդպիսով՝ հրապարակախոսական-խմբագրական պատկառելի փորձ ունեցող Դ. Անանունի ջանքերով թերթը ավելի հետաքրքիր բովանդակություն է ստանում: Քաղաքական, տնտեսական բաժիններից բացի, ստեղծվում է գրական բաժինը, որին աշխատակցում էին Ստ. Զորյանը, Դ. Դեմիրձյանը, Վ. Թոթովենցը, Ե. Չարենցը և ուրիշներ<sup>5</sup>:

Դ. Անանունն իր բազմաժանր հոդվածներում, աշխատություններում, հրապարակային դասախոսություններում ամեն կերպ սատարում էր հայկական պետականության կերտման աշխատանքներին: Նա իր հրապարակումներում անդրադառնում էր Հայաստանի թե՛ ներքին (տնտեսական, սոցիալական, պարենային և այլն) և թե՛ արտաքին («Ռուսաստան, ՀՀ-Անտանտ և այլն) քաղաքական խնդիրներին<sup>6</sup>: Օրինակ, Հայաստանի տնտեսությունը զարգացնելու հարցում կրավորականություն դրսևորելու համար Դ. Անանունը քննադատում էր հայրենախույս հայ բուրժուազիային, որը. «փոխանակ իր կապիտալը ի սպաս դնելու սեփական ժողովրդի անկախութեան հիմքերն հաստատուն դարձնելու համար, բլօկադի է ենթարկել հայ հայրենիքը և դավեր է լարում նրա դեմ»<sup>7</sup>: Վերը նշվածից բացի, նա հուշեր ու հոդվածներ է գրում բանաստեղծ Վ. Տերյանի<sup>8</sup>, էսէճ Լ. Աթաբեկյանի<sup>9</sup>, սոցիալ-դեմոկրատ Ալ. Ռուբենու<sup>10</sup> և ուրիշների հիշատակին:

1920 թ. մարտին Դ. Անանունը նշանակվում է Հայկոպի հրատարակչական բաժնի վարիչ<sup>11</sup>: Բացի «Հայաստանի կօօպերացիա»-ից, այս փուլում նա խմբագրել ու թղթակցել է նաև

<sup>1</sup> Տե՛ս ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, գ. 6, թ. 1-2:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 13, գ. 670, թ. 40:

<sup>3</sup> Տե՛ս «Հայաստանի կօօպերացիա», 1919, N 14, օգոստոսի 31, էջ 415-416:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 417:

<sup>5</sup> Տե՛ս Վիրաբյան Ա., Կյանք և ողբերգություն, «Հայաստան», 1991, N 107, հունիսի 20:

<sup>6</sup> Ի դեպ, Դ. Անանունին՝ որպես «Հայաստանի կօօպերացիա» թերթի խմբագիր 1919 թ. հոկտեմբերի 28-ից թույլատրվել է հաճախել խորհրդարանի նիստերին: Բացի այդ, Բնակարանային հատուկ հանձնաժողովը նույն թվականի նոյեմբերի 12-ի որոշմամբ նրան Աստաֆյան փողոցի 71-րդ հասցեում տրամադրել է մեկ սենյականոց բնակարան, Տե՛ս ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, գ. 111, թ. 6:

<sup>7</sup> «Նոր սերունդ», Ե., 1920, N 1, մարտի 17:

<sup>8</sup> Տե՛ս «Հայաստանի կօօպերացիա», 1920, N 13, հուլիսի 15, էջ 521-525:

<sup>9</sup> Տե՛ս նույնը, N 7-12, ապրիլի 30, մայիսի 15, 31, հունիսի 15, հուլիսի 1:

<sup>10</sup> Տե՛ս նույնը, N 14, հուլիսի 31, էջ 570-574:

<sup>11</sup> Տե՛ս ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, գ. 111, թ. 8:

այլ թերթերի: Օրինակ՝ ուշագրավ երևույթ էր ՀՀ խորհրդարանի նախագահության նախաձեռնությամբ մեկ անգամ տպագրված «Բանակի օր»-ը<sup>1</sup>, որի խմբագիրներն էին Դ. Անանունը, Ս. Կրացյանը և Եր. Հարությունյանը<sup>2</sup>:

Դ. Անանունը և ՍԴԲՀԿ Հայաստանում ապաստանած այլ անդամներ կարճ ժամանակում կարողանում են ոչ միայն հայրենիքում ամրապնդվել, այլև, օգտվելով քաղաքական նպաստավոր պայմաններից, իրենց շուրջը համախմբել այլ սոցիալ-դեմոկրատական ուժերի և ձևավորել նոր կուսակցություն: 1920 թ. հունվարի 18-ին նրանք հանդես են գալիս հայտարարությամբ՝ ազդարարելով անկախ Հայաստանի հողի վրա նոր՝ Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության (ՀՍԴԲԿ) հիմնադրումը: Այդ հայտարարության տակ այբբենական կարգով ստորագրել էին հիմնադիր անդամներ՝ Դավիթ Անանունը, Պետրոս Զաքարյանը, Ստ. Զորյանը, Բախշի Իշխանյանը, Յուլյակ Խանգադյանը, Աշոտ Մելիք-Հովսեփյանը, Գագիկ Պիճիկյանը, Պողոս Օհանջանյանը, Խաչիկ Սամվելյանը, Տրդատ Տրդատյանը<sup>3</sup>:

ՀՍԴԲԿ-ն հիմնվում էր սպեցիֆիկների և Անկախ սոցիալիստների կամ «Զուրաբականների»<sup>4</sup> միավորմամբ: Ընդ որում՝ նորաստեղծ կուսակցության հիմքը կազմում էին 1918 թ. Բաքվի սեպտեմբերյան ջարդերի հետևանքով կազմաքանդված ՍԴԲՀԿ անդամները<sup>5</sup>, իսկ Անկախ սոցիալիստները, որոնք վրաց մենշևիկների ազգային քաղաքական ուժի վերածվելուց հետո հայտնվել էին անորոշ վիճակում, միանում էին նրանց<sup>6</sup>: Ինչպես Դ. Անանունը, այնպես էլ նրա ակտիվ մասնակցությամբ ու ղեկավարությամբ ստեղծված ՀՍԴԲԿ-ն որոշել էր. «Ամուր ոտքերով կանգնել ազգային պետականութան տեսակետի վրայ, այսինքն՝ ընդունել հայ ժողովրդի ազգային ինքնորոշումը, որ է միացեալ Հայաստանի որպէս քաղաքական ուրոյն միաւորի անկախութիւնը»<sup>7</sup>:

Բուլշևիկների մայիսյան հակապետական ելույթի շրջանում, որպես ՀՍԴԲԿ ներկայացուցիչներ, Դ. Անանունը և Բ. Իշխանյանը մասնակցում են Հայաստանի խորհրդարանի նախաձեռնությամբ 1920 թ. մայիսի 13-ին կազմակերպված կուսակցությունների ներկայացուցիչների խորհրդակցությանը: Նրանք միակամ պատրաստակամություն են հայտնում աջակցել կառավարությանը Միացյալ Հայաստանի անկախությունը պաշտպանելու գործում<sup>8</sup>:

Հայաստանում Դ. Անանունի հասարակական-քաղաքական գործունեության ուշագրավ ոլորտներից էր իր փոքր հայրենիքի՝ Ղարաբաղի հարցը: Բանն այն է, որ թե՛ Լեռնային Ղարաբաղի հայերի հայրենակցական միության նախագահ Դ. Անանունը, թե՛ ՀՍԴԲԿ ղեկավար մյուս գործիչները ծնունդով հիմնականում արցախցիներ լինելով, ջանք չէին խնայում Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու համար: Ղարաբաղի խորհրդայնացումից հետո Դ. Անանունը<sup>9</sup>, հաշվի առնելով այնտեղ ստեղծված քաղաքական ծանր իրավիճակը, 1920 թ. հուլիսին նամակով դիմում է Հայաստանի վարչապետ Հ. Օհանջանյանին՝ առաջարկելով ծնունդով արցախցի մի շարք գործիչների՝ թվով 26 մարդու, հատուկ հանձնարարականներով գործուղել Ղարաբաղ: Գործուղվողների շարքում, իր անվան կողքին, նա նշում էր Հովհաննես Առաքելյա-

<sup>1</sup> Տե՛ս «Բանակի օր», 1919, դեկտեմբերի 21:

<sup>2</sup> Խմբագրական խոսքում նշվում է, որ դեկտեմբերի 19-21-ը հայոց բանակի մեծարման օրերն են և այդ կապակցությամբ հայ գրական գործիչները միօրյա թերթում մաղթանքներ են հղում հայ զինվորներին: Թերթի վաճառքից ստացված գումարով ընծաներ են տրամադրվելու զինվորներին: Չորս էջից բաղկացած այդ թերթում տպագրվել էին Հ. Թումանյանը, Ա. Իսահակյանը, Լեոն, Վ. Փափագյանը, Ս. Զորյանը և այլք:

<sup>3</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 68, թ. 1:

<sup>4</sup> Անկախ սոցիալիստները ՌՍԴԲԿ մենշևիկյան թևի հայ անդամներն էին, որոնք իրենց ղեկավար Արշ. Զուրաբյանի անունով հաճախ անվանվում էին նաև «զուրաբականներ»: Նրանք իրենց գործունեությունը հիմնականում ծավալել են ձախ հայացքներով և հեղափոխական ավանդույթներով հարուստ Ալեքսանդրապոլում, որի քաղաքագլուխ Լ. Սարգսյանը նրանց ղեկավարներից էր: Անկախները նաև կազմել և հրատարակել էին իրենց՝ չափավոր և պայքարի քաղաքակիրթ մեթոդներ առաջարկող ծրագիրը, որը քննադատվել էր բուլշևիկ Բ. Ղարիբջանյանի կողմից: Տե՛ս Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920), Ե., 2005, էջ 207-208, Ղարիբջանյան Գ., Սովետական իշխանության համար մղված պայքարում, Ե., 1966, էջ 143:

<sup>5</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 72, թ. 4:

<sup>6</sup> Նրանց մեծ մասը ՀՍԴԲԿ մեջ էր մտել 1920 թ. մարտին, Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 72, թ. 7:

<sup>7</sup> ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 68, թ. 1:

<sup>8</sup> Տե՛ս «Ժողովուրդ», 1920, N 80, մայիսի 16, նաև Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը..., էջ 291, նաև Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., (քաղաքական պատմություն) փաստաթղթերի և նյութերի ժողովածու, ղեկավար՝ Վ. Ղազարխանյան, Ե., 2000, էջ 189-190:

<sup>9</sup> Ըստ 1919 թ. հունվարի 25-ին նրան տրված մանդատի Դ. Անանունը եղել է նաև Շուշիում ՀՀ ներկայացուցիչը, բայց այդ մանդատը չի ձանաչվել, Տե՛ս ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, գ. 111, թ. 7, գ. 35, թ. 1:

նի, Հրանտ Բահաթրյանի, Գերասիմ Բալայանի, Հարություն Թունյանի, Եղիշե Իշխանյանի, Բախշի Իշխանյանի և այլոց անունները<sup>1</sup>: Առաջարկվում էր Ղարաբաղում՝ Աբրահամ Գյուլխանդանյանի գլխավորությամբ, ստեղծել հինգ հոգուց բաղկացած քաղաքական մարմին:

1920 թ. օգոստոսին Դ. Անանուն երկրորդ անգամ է դիմում վարչապետին: Այս անգամ նա ներկայացնում է «Հայաստանի կօօպերացիա»-ում նոյեմբերի 17-ին տպվելիք իր հեղինակած «Ղարաբաղ» հոդվածի բովանդակությունը<sup>2</sup>: Դրանում Դ. Անանունը խստորեն քննադատում էր Ղարաբաղի այն հայ առևտրականներին, որոնք գործարար կապեր ունեին Բաքվի հետ և հանդես էին գալիս Ղարաբաղը Ադրբեջանին միացնելու օգտին: Նա դատապարտում էր այն մարդկանց, որոնք գրեհկացնում էին տնտեսական գործունը. «մինչև այն աստիճան, որ Շուշիում հրատարակուած սոց.-հեղափոխական մի թերթի պես վեր կենալ ու ասել, թե որովհետև թուրք թափառական խաշնարածը Շուշու քաղքենիներին մատակարարում է յուղ, պանիր ու բուրդ, ուրեմն յեվ Շուշին կապված է Ադրբեջանի հետ յեվ պիտի լինի նրա անբաժան մասը»<sup>3</sup>: Հեղինակը հույս էր հայտնում, որ Ղարաբաղի հարցում ՀՀ կառավարությունը զիջման չի գնա և իր հոդվածն ավելի կամրացնի հայ գործիչների համոզվածությունն այդ հարցում<sup>4</sup>:

Բայց Դ. Անանունի և մյուս գործիչների դիմումներն ընթացք չեն ստանում, որովհետև մահացու վտանգն այդ ժամանակ արդեն կախվել էր ողջ հանրապետության գլխին:

Դ. Անանունի հասարակական-քաղաքական ակտիվության դրսևորումներից էին հրապարակային վճարովի դասախոսությունները: 1920 թ. նա միայնակ կամ կուսակցական ընկերների հետ այդպիսի ելույթներ է ունենում տարբեր քաղաքներում: Քաղաքական և պատմագիտական տեսանկյունից հետաքրքիր են նաև նրա դասախոսությունների թեմաները. «Սոցիալ-դեմոկրատները և սոցիալիստ հեղափոխականները հայ իրականության մեջ», «Մեր քաղաքական դեգերումները. Արևելք, թե Արևմուտք», «Ով ինչպես էր հավաքում հայոց ազգը (Ստ. Նազարյան, Գ. Արծրունի, Րաֆֆի)», «Ղարաբաղը վեճի առարկա» և այլն<sup>5</sup>:

Թուրք-բոլշևիկյան գործակցության հետևանքով 1920 թ. աշնանը Հայաստանը հայտնվում է դժվարին կացության մեջ, իսկ թուրք-հայկական պատերազմում կրած ծանր պարտությունը երկրում ավելի է խորացնում ճգնաժամը: Հ. Օհանջանյանի գլխավորած բյուրո-կառավարությունը հրաժարական է տալիս: Վարչապետի նոր թեկնածու է առաջադրվում Սիմոն Վրացյանը, որին հանձնարարվում է կազմել նոր կառավարություն: Ս. Վրացյանի «ձախ» կոալիցիոն կառավարության մեջ մտնելու առաջարկ է արվում նաև ՀՍԴԿ երկու նշանավոր գործիչների՝ Դ. Անանունին և Բ. Իշխանյանին, բայց նրանք հրաժարվում են<sup>6</sup>: Փոխարենը կառավարության մեջ են մտնում երկու էսէռ գործիչներ՝ Վ. Մինախորյանը և Ա. Խոնդկարյանը:

Հայաստանում բոլշևիկների իշխանության հաստատումից հետո, ի տարբերություն կուսակցից ընկերների, մասնավորապես՝ Բ. Իշխանյանի, Դ. Անանունը բռնության չի ենթարկվում: Դա թերևս պայմանավորված է նրա և ազդեցիկ բոլշևիկ (նախկին սպեցիֆիկ) Աշոտ Հովհաննիսյանի մտերիմ հարաբերություններով: Պատահական չէ, որ 1920 թ. դեկտեմբեր-1921 թ. հուլիս ամիսներին Դ. Անանունն ու Ս. Ջորյանը ապրել են Ա. Հովհաննիսյանի տանը<sup>7</sup>: Ավելին՝ 1921 թ. հունվարի 15-ին նա ժամանակավորապես նշանակվում է Պարենավորման ժողկոմատի կուլտուր-մշակութային բաժնի քարտուղար<sup>8</sup>, իսկ Փետրվարյան ապստամբության օրերին (փետրվարի 17-ին) դառնում է նույն կոմիսարիատի հրատարակչական բաժնի վարիչ<sup>9</sup>:

Ի տարբերություն Փետրվարյան ապստամբության հետևանքով Երևանի բանտից ազատված Բ. Իշխանյանի ընդգծված հակաբոլշևիկյան գործունեության՝ այդ օրերին Դ. Անա-

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 98, թ. 13:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 14-15:

<sup>3</sup> Նույն տեղում, թ. 15, նաև՝ Օհանյան Հ., Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը, ՀԱԱ, ձեռագիր նյութեր, էջ 30:

<sup>4</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 98, թ. 15, նաև՝ ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, գ. 8, թ. 2, շրջ.:

<sup>5</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 116, թ. 8, 9, 17, նաև՝ ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, գ. 138, թ. 1:

<sup>6</sup> Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 518:

<sup>7</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 13, գ. 670, թ. 31, գ. 16, գ. 67, թ. 125: Հետագայում տված ցուցմունքում Դ. Անանունը նշել է, որ 1920 թ. դեկտեմբեր-1921 թ. հուլիս ժամանակահատվածում Ա. Հովհաննիսյանի հետ հետո նույն տանն են ապրել՝ ինչպես ընդհանուր ընտանիք, ունեցել են ընդհանուր սեղան, միասին են թեյել, գիշերը դռները չեն փակել:

<sup>8</sup> Տե՛ս ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, գ. 111, թ. 11:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 9:

նունը ցուցաբերում է ավելի զուսպ, հավասարակշռված վարքագիծ<sup>1</sup>: Նա փորձում է միջնորդական առաքելություն իրականացնել, ներգրավվում է հումանիտար բնույթի աշխատանքում: Տարիներ անց, իր ձերբակալությունից հետո տեղի ունեցած հարցաքննության ժամանակ, ի պատասխան Փետրվարյան ապստամբության ժամանակ իր գործունեության և Սիմոն Վրացյանի հետ հարաբերությունների վերաբերյալ հարցերին՝ Դ. Անանունը նշել է, որ այդ օրերին Լևոն Սարգսյանի հետ այցելել է Ս. Վրացյանին<sup>2</sup>: Նրանք առաջարկել են իրենց միջնորդությունը բոլշևիկների հետ բանակցություններում՝ երկրում խաղաղություն հաստատելու համար: Դ. Անանունը նաև հավելել է, որ էսէռ Իսահակ Տեր-Ներսեսյանի հետ շրջել և Ս. Վրացյանի կողմից իրենց տրամադրված գրությամբ ազատել են անմեղ ձերբակալվածների: Ըստ նրա՝ այդ գործում ինքը ներգրավվել է իր մոտ ընկեր Գագիկ Պիճիկյանին ու նրա կնոջը ազատելու համար Ս. Վրացյանին ուղղված խնդրանքից հետո<sup>3</sup>:

Պարենավորման ժողովմատի հրատարակչական բաժնի վարիչի պաշտոնում Դավիթ Անանունի գործունեությունը երկար չի տևում, քանի որ նոր իշխանությունները նրանից քաղաքական-քարոզչական աշխատանքների ծրագիր են պահանջում: Ի պատասխան դրա՝ 1921 թ. հուլիսի 7-ին Հայկոպի վարչությանը գրած նամակում Դ. Անանունը ներկայացնում է իր աշխատանքի վերաբերյալ պատկերացումները, մատնանշում, որ նախորդ իշխանությունների օրոք ինքը խոսքի ազատություն է ունեցել: Նամակում բերված փաստարկները չեն օգնում, և հուլիսի 18-ին Դ. Անանունն աշխատանքից ազատման դիմում է գրում<sup>4</sup>:

Պետական ծառայությունից հեռանալուց հետո՝ նույն ամսին Դ. Անանունը Հայաստանի գիտական ինստիտուտի (էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտ) հրավերով անցնում է գիտական աշխատանքի<sup>5</sup>: Նա մասնակցում է ինստիտուտի ստեղծման մեկ ամյակի կապակցությամբ կազմակերպված գիտաժողովին և հանդես գալիս գրական-գիտական ուղղվածությամբ երկու զեկուցումներով<sup>6</sup>: Դ. Անանունի զեկուցումների թեմաները վերաբերում էին Հայաստանի և Ադրբեջանի բարձր դասերին ու գյուղագիրներին: Այդ զեկուցումները և Աշոտ Հովհաննիսյանի հայերի ռուսական կողմնորոշման ծագման հարցի մասին հոդվածի գրախոսությունը լույս են տեսնում ինստիտուտի ամսագրում<sup>7</sup>: Բացի այդ՝ գիտական ինստիտուտի որոշմամբ 1922 թ. տպագրվում է Դավիթ Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը» աշխատության երկրորդ հատորը (1870-1900)<sup>8</sup>:

1923 թ. փետրվարին Դ. Անանունը նշանակվում է Խորհրդային Հայաստանի Հեղափոխության թանգարանի վարիչ: Այս նշանակման դեմ բողոքում են որոշ բոլշևիկներ<sup>9</sup>, բայց նրանց կարծիքն այդ օրերին հաշվի չի առնվում: Բանն այն է, որ ՍԴԲԿ-ին նախկինում ան-

<sup>1</sup> Հետագայում իր ցուցմունքներում Դ. Անանունը նշել է, որ ապստամբությանը մասնակցություն չի ունեցել: Բայց, Հայրենիքի փրկության կոմիտեի պաշտոնաթերթ «Ազատ Հայաստան»-ում կա «Դ.» ծածկանունով մի հոդվածագիր, ով երկու մասից բաղկացած հոդված է գրել ազգային հարցում բոլշևիկների դիրքորոշման մասին, ընդ որում՝ ոչ դրական առումով (տե՛ս Դ., Ազգերի ինքնորոշումը և բոլշևիկները, Ա մաս, «Ազատ Հայաստան», Ե., 1921, N 21, մարտի 16, թ. 2, Բ մաս, N 34, մարտի 31, թ. 1-2): Թեև ծածկանունը և հոդվածի թեման սկզբները որոշակիորեն ուղղում են դեպի նա և կասկածի տակ դնում նրա ցուցմունքի ճշմարտացիությունը, լրացուցիչ հիմքեր չունենալով՝ ձեռնպահ ենք մնում եզրահանգումների հարցում: Այդ օրերին ՀՍԴԲԿ գործունեության մասին նշենք, որ որոշ ղեկավար գործիչներ երկիցս փորձել են կուսակցական ընդհանուր ժողով հրավիրել, բայց դրա կայացման և արդյունքների մասին տեղեկություններ չկան: Ժողովի հայտարարության կրկնությունը և արդյունքների մասին տեղեկությունների բացակայությունը վկայում են դրա չկայանալու մասին: Ժողովի վերաբերյալ հայտարարություններ են տպագրվել «Ազատ Հայաստանի» մարտի 20-ի ու 22-ի համարներում: Տե՛ս «Ազատ Հայաստան», Ե., 1921, N 25, մարտի 20, թ. 2, N 26, մարտի 22, թ. 2:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 13, գ. 670, թ. 30:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 31. 40:

<sup>4</sup> ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, գ. 7, թ. 1-5:

<sup>5</sup> Նույն տեղում, գ. 81, թ. 1, գ. 111, թ. 12:

<sup>6</sup> Նույն տեղում, Դ. Անանունի ֆոնդ, գ. 135, թ. 1:

<sup>7</sup> Տե՛ս «Բարձր դասը Հայաստանում և Ազերբայջանում», «Արշակ Ազապեան», «Աշ. Յովհաննիսեանի Հայ-Ռուս Օրիենտալիստիկ ծագման խնդիրը», «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա եւ Բ, 1921-1922, էջ 1-14, 68-82, 254-257:

<sup>8</sup> Վիրաբյան Ա., Կյանք և ողբերգություն, «Հայաստան», 1991, N 107, հունիսի 20:

<sup>9</sup> Սուրեն Ե., (Ս. Երզնկյան), Ֆիզուրա օդիոգա, «Մարտակոչ», 1923, N 160, սեպտեմբերի 5, էջ 2-3:

դամակցած Ալ. Մյասնիկյանը<sup>1</sup> 1921 թ. մայիսին անցնելով ՀՍԽՀ կառավարության գլուխ, պատասխանատու պաշտոնների է նշանակում իր ընկերներին և իր վստահելի անձանց, որոնց մեծ մասին ճանաչում էր դեռևս ՍԴԲՀ անդամության շրջանից<sup>2</sup>: Այդպիսով՝ Խորհրդային Հայաստանում իշխանությունն, ըստ էության, անցնում է սպեցիֆիկյան անցյալ ունեցող մի խումբ բուլշևիկների ձեռքը: Այդ հանգամանքը նպաստում է ՀՍԴԲԿ-ի առանց ցնցումների լուծարմանը, նրա անդամների՝ պետական ապարատում, ինչպես նաև գիտակրթական հաստատություններում զանազան պաշտոններ զբաղեցնելուն: Դ. Անանունի նշանակումը կատարվում է հենց այս համատեքստում՝ արդեն ՀԿ(Բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար դարձած Ա. Հովհաննիսյանի երաշխավորությամբ<sup>3</sup>:

Պաշտոնավարման տարիներին Դ. Անանունը քայլեր է ձեռնարկում հայոց պատմության սկզբնաղբյուրների հայտնաբերման, հավաքման և հրատարակության ուղղություններով<sup>4</sup>: Օրինակ՝ 1923 թ. մարտի 12-ին Ս. Տեր-Փաբրիեյանին գրած նամակում նա խնդրում է Պետրոգրադի նախկին ժանդարմական վարչության արխիվից Հայաստանի Հեղափոխության թանգարանին ուղարկել հայ անլեզալ թերթերի հավաքածուներ, թռուցիկներ, գործիչների լուսանկարներ, զանազան զեկուցումներ հայ հեղափոխական շարժումների մասին: Հորդորում է ջանքեր գործադրել Սենատից ստանալու Ղաշնակցության գործն իր բոլոր իրեղեն ապացույցներով ու տվյալներով: Բացի այդ՝ իր համար խնդրում է Գ. Պլեխանովի բոլոր գործերի մի հավաքածու և այլ գրքեր<sup>5</sup>: Սփյուռքի ռամկավար գործիչներից Հրաչ Երվանդին ուղղված նամակում էլ Դ. Անանունը հորդորում է հին ու նոր պարբերականներ հավաքել թանգարանի համար, տեղեկություններ հաղորդել 1897 թ. ձերբակալված արմենականների մասին, նշում, որ Արտակը (թերևս Դարբինյան-հեղ.) խոստացել է Ա. Արվիարյանի արխիվն ուղարկել: Վերջում նա հավելում է, որ նույն հարցով դիմել է նաև Փարիզում գտնվող Մարտիրոս Սարյանին<sup>6</sup>:

Վերը շարադրվածը հիմք է տալիս պնդելու, որ Դ. Անանունը գիտական, ստեղծագործական աշխատանքին զուգահեռ նաև զգալի ջանքեր է գործադրել Հայաստանում պատմագիտության զարգացման համար նախադրյալների ձևավորման համար: Թերևս նաև այդ հանգամանքն է նպաստում, որ նա Թ. Ավդալբեգյանի և Ե. Շահագիզի հետ միասին 1926 թ. ընտրվում է դեռևս 1925 թ. ստեղծված ՀՍՍԴ գիտության և արվեստի ինստիտուտի պատմահասարակական բաժնի անդամ<sup>7</sup>: Դա Խորհրդային Հայաստանում նրա վերջին ձեռքբերումներից էր:

Խորհրդային Հայաստանի սպեցիֆիկյան անցյալ ունեցող բուլշևիկ պետական գործիչների առաջնորդ Ալ. Մյասնիկյանի ողբերգական մահից հետո (1925 թ. մարտի 22) նախկին սպեցիֆիկների, այդ թվում՝ Դ. Անանունի դիրքերը լրջորեն թուլանում են: Չնայած Ալ. Մյասնիկյանի տեղը փորձում է լրացնել Ս. Լուկաշինը, բայց ժամանակի ընթացքում ՀԿ(Բ)Կ ներսում հասու-

<sup>1</sup> Ալ. Մյասնիկյանի այդ փուլի գործունեության մասին մանրամասն տե՛ս Հակոբյան Վ., Ալեքսանդր Մյասնիկյանի հասարակական-քաղաքական գործունեության մինչբուլշևիկյան փուլը, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Ե., 2017, էջ 96-107:

<sup>2</sup> Նրանցից էին՝ Ս. Լուկաշինը (1883-1937), 1921 թ. ՀԿ(Բ)Կ կենտկոմի քարտուղար, 1922 թ. ապրիլից ՀՍԽՀ ժողտնտխորհի, իսկ մայիսից ժողկոմխորհի նախագահ, 1925-1928 թթ. Անդրդաշնության ժողկոմխորհի նախագահի տեղակալ, 1928 թվականից պատասխանատու պաշտոններ է վարել ԽՍՀՄ ժողկոմխորհում, Ա. Հովհաննիսյանը (1887-1972), 1920-1921 թթ. ՀՍԽՀ լուսավորության ժողկոմ, 1922-1927 թթ. ՀԿ(Բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար, 1928 թ. տեղափոխվել է Մոսկվա և զբաղվել գիտամանկավարժական գործունեությամբ, Ա. Կարինյանը (1886-1982), 1921 թ. ՀՍԽՀ արդարադատության ժողկոմ, 1923-1924 Կենտգործկոմի նախագահի տեղակալ, իսկ 1924-1928 թթ.՝ նախագահ, 1928 թ. հետո հիմնականում զբաղվել է գիտական գործունեությամբ, Պ. Սակինցյանը (1884-1938), 1921 թ. գարնանից ներքին գործերի ժողկոմ, ժողկոմխորհի նախագահի տեղակալ, 1921 թ. սեպտեմբերից լուսավորության ժողկոմ, 1922-1924 թթ. դիվանագիտական աշխատանք է կատարել Կ. Պոլսում, 1925-27 թթ.՝ Միլանում և Փարիզում, այնուհետև զբաղվել է գիտական գործունեությամբ և այլն:

<sup>3</sup> Տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», 1998, N 1, էջ 27:

<sup>4</sup> Խնդրո առարկա ժամանակաշրջանում Դ. Անանունը «Նորք» ամսագրի մի շարք համարներում հրատարակում է արժեքավոր սկզբնաղբյուրներ: Տե՛ս Երկու վավերագիր, «Նորք», Ե., 1923, գիրք 1, էջ 321-327, Հնչակյանների հարումը ռուսական հեղափոխությանը ու սոցիալիզմին, «Նորք», 1923, գիրք 2, էջ 274-315, Վարդան Գոլոշյանը և իր շրջանը, «Նորք», 1924, գիրք 4, էջ 328-361, Ժանդարմական վարչության զեկուցումը հայերի հեղափոխական շարժումների մասին, «Նորք», 1925, գիրք 5-6, էջ 425-452:

<sup>5</sup> Տե՛ս Ազնավուրյան Գ., Դավիթ Անանունի նամակագրությունից, «Պատմաբանասիրական հանդես», Ե., 1984, N 1, էջ 175-176:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 176-177:

<sup>7</sup> Տե՛ս Հարությունյան Շ., Պատմագիտության զարգացումը Սովետական Հայաստանում 1920-1963, ուրվագծեր, Ե., 1967, էջ 11:



նանում է ընդդիմադիր խմբակցություն, որը ձգտում էր իր ձեռքը վերցնել ՀԿ(Բ)Կ ղեկը՝ դուրս մղելով Ալ. Մյասնիկյանի առաջ քաշած գործիչներին: Այդ պայքարում կուսակցական ղեկավարության դեմ օգտագործվող հիմնական գեներներն էին նրանց զգալի մասի սպեցիֆիկյան անցյալը, նախկին սպեցիֆիկների դեմ մեղմ վերաբերմունքը, բոլշևիկյան կուսակցական պատմության մեջ սպեցիֆիկների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքը և այլն<sup>1</sup>:

Այդ պայմաններում 1926 թ. Վենետիկում լույս է տեսնում Դ. Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը» աշխատության երրորդ հատորը (1901–1918 թթ.), որը մեծամասամբ գրված էր ազգային ոգով և ոչ բոլշևիկյան դիրքերից: Բացի այդ՝ նշված աշխատանքում Դ. Անանունը հայ սոցիալ-դեմոկրատիայի պատմությունը ներկայացրել էր ընդհանրական ձևով՝ նրանում զգալի տեղ հատկացնելով ՍՂԲՀԿ պատմությանը: Ժամանակի համար համարձակ այդ աշխատության լույս ընծայումը մի կողմից խաչ է քաշում Դ. Անանունի ապագայի վրա, մյուս կողմից արձակում է ՀԿ(Բ)Կ ներսում առկա ընդդիմության լեզուն և ձեռքերը: Վերջիններիս ճնշմամբ 1926 թ. նոյեմբերին Դ. Անանունը ազատվում է աշխատանքից, իսկ 1927 թ. հուլիսի 28-ին՝ Թիֆլիսում Հայաստանի պետական քաղաքական վարչության խնդրանքով ձերբակալվում: Այնտեղ նա մեկնել էր կա՛մ արտասահման (Պարսկաստան) անցնելու թույլտվություն ստանալու, կա՛մ Թիֆլիսում աշխատանք գտնելու, տեղավորվելու նպատակով<sup>2</sup>: Ընդ որում՝ արտասահման մեկնելու անցագրի հարցում նրան մերժել էին, բայց աշխատանքի առումով Մ. Օրախելաշվիլին նրան որոշակի հույսեր էր տվել, թեև բայց բանը դրան չի հասնում<sup>3</sup>: Նրա ձերբակալությունից տաս օր անց ՀԿ(Բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Հայկ Հովսեփյանը ՀամԿ(Բ)Կ Անդրերկրյոմի պաշտոնաթերթում հանդես է գալիս հողվածով, որում ի թիվս այլ հարցերի, Դ. Անանունին անվանում է խորհրդային իշխանության և պրոլետարական հեղափոխության ռիսերիմ թշնամի<sup>4</sup>, ինչը նշանակում էր, որ նրա ձակատագրի հարցը լուծված է:

1927 թ. սեպտեմբերին Դ. Անանունին տեղափոխում են Երևան<sup>5</sup>, իսկ 1928 թ. ապրիլի 27-ին Պետքաղվարչության հատուկ խորհրդակցության որոշմամբ երեք տարով աքսորում Սիբիր<sup>6</sup>: Սկզբում նրան տանում են Մոսկվա, ապա Տոմսկի շրջանի Նարիմի երկրամասի Իլինո գյուղ<sup>7</sup>: Այնուհետև տասնհինգ տարի նա անցկացնում է ազատության սահմանափակման ու զրկման այլ վայրերում (Աստրախան, Ուֆա և այլն), ծանր պայմաններում: Դավիթ Անանունը մահացել է 1943 թ. Աստրախանի ճամբարում<sup>8</sup>:

Այսպիսով՝ կյանքից հեռանում է մարքսիզմի, սոցիալ-դեմոկրատական շարժման գաղափարաբանությունը և արժեքները հայերի ազգային արժեքների, շահերի ու հայ իրականության պայմանների հետ յուրօրինակ կերպով միահյուսող, փոխկապակցող մի վառ անհատականություն, ով միաժամանակ համատեղում էր պատմաբանի ու փիլիսոփայի, հրապարակախոսի և գրաքննադատի, թարգմանչի ու գեղարվեստագետի հատկանիշներ և մասնագիտություններ:

Բոլշևիկների քաղաքական հայացքներն ու քաղաքականությունը չկիսող և դրանք քննադատող Դավիթ Անանունը երկարամյա հալածանքներից ու տառապանքներից հետո մահանում է անհայտության մեջ: Մասնագիտական ուժերի ծաղկման շրջանում գտնվող Դավիթ Տեր-Դանիելյանը բոլշևիկյան հանցավոր քաղաքականության հետևանքով ստիպված է լինում աքսորի մեջ իր գոյությունը քարշ տալ ստորացուցիչ աշխատանքով:

Եվ վերջապես, յուրային չլինելով ո՛չ Սփյուռքի, ո՛չ Խորհրդային Հայաստանի քաղաքական, գիտական հանրույթի համար, նրա կերպարն ու գիտական ժառանգությունը պատշաճ ուշադրության չեն արժանանում, մոռացվում են, իսկ փոքրաթիվ անդրադարձերն էլ հաճախ գերծ չեն մնում անձնություններից, աղավաղումներից ու կեղծիքներից:

<sup>1</sup> Այս մասին առավել համակարգված Տե՛ս Ա. Եսայանի Մոսկվա ուղարկված գեկուցագրում, ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 77, թ. 37-51:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 13, գ. 670, թ. 32:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 41:

<sup>4</sup> Տե՛ս Овсеян Г., Единым фронтом под знаменем ленинизма, “Заря Востока”, Тифлис, 1927, N 1546, 7 августа, с. 5.

<sup>5</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 13, գ. 670, թ. 4:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 99:

<sup>7</sup> Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244<sup>21</sup>, 86:

<sup>8</sup> Տե՛ս Վիրաբյան Ա., Կյանք և ողբերգություն, «Հայաստան», 1991, N 107, հունիսի 20:

**Овик Григорян, Ваагн Акопян, ОЧЕРКИ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ ДАВИДА АНАНУНА.** В данной статье коротко представлена жизнь и деятельность известного публициста, общественного, политического деятеля и историка Давида Анануна, который стал жертвой репрессий 1920-1930-их годов проводя в ссылках и лагерях шестнадцать лет. После его смерти, прошло более 80 лет, но его научное наследие и фигура в достаточной мере не изучены и не реабилитированы. Дело в том, что политическая партия, которому он принадлежал и его политические взгляды были оппозиционными и по отношению к большевикам и к членам АРФ дашнакцутюн. По этой причине представители историографии обеих партий, которые были самыми влиятельными, по политическим соображениям игнорировали или критиковали его личность и научное наследие. В постсоветский период, наблюдаются некоторые позитивные сдвиги, но масштабы и качество этих изменений не удовлетворительны. Поэтому, в связи исполнением через несколько месяцев 140-летия со дня рождения Давида Анануна, мы намереваемся начать исследование его жизни, деятельности и научного наследия.

*Ключевые слова.* Давид Ананун, специфика, социал-демократ, общественно-политическая жизнь, публицистика, историческая наука.

**Hovik Grigoryan, Vahagn Hakobyan, NOTES ON DAVID ANANUN'S LIFE AND ACTIVITY.** This article briefly presents the life and activity of the well-known publicist, public, political figure and historian David Ananun, who became a victim of political repression of the 1920s and 1930s of the 20th century spending 16 years in exile and camps. More than 80 years have passed, but his scientific heritage and personality have not been sufficiently studied and rehabilitated at all. The fact is that the political party to which he belonged to and his political views were opposition to both the Bolsheviks and the Dashnaktsakans. For this reason, the historiographers of both parties, who were the most influential, ignored or criticized his personality and scientific heritage for political reasons. In the post-soviet period some positive changes have already been observed, but the scale and quality of these changes are not satisfactory. Therefore, in connection with the upcoming 140th anniversary of David Ananun we intend to begin a research on his life, activity and scientific heritage.

*Key words:* David Ananun, specifics, social democrat, social-political life, publicity, historical science.